ԸՆԹԵՐՑԱՐԱՆ 2

ԱՐԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Գիրք-տետր

երկրորդ դասարանցիների համար

2-րդ մաս

Նկարիչ՝
ԱՐՏԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՆՈՐ ԴՊՐՈՑ»
հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ
1997

ԱԻԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

© «ՆՈՐ ԴՊՐՈՅ»

հրատարակչություն
1997

Մայրենիի գիրք-տետր
երկրորդ դասարանցիների
համար
(երկրորդ մաս),
84 էջ

Եր., «ՆՈՐ ԴՊՐՈՅ», 1997

ՀԱՍՈ
ՍԱՀՅԱՆ

ՏԵՐԵՎԸ

Արդեն իջնում է եղյամը սարին,
Ցուրտ քամին արդեն քաղաք է մտնում,
Բայց համառում է մի տերև ծառին...
Արդյոք դրա մեջ նա ի՞նչ է գտնում:

Երևի գիտի, որ կընկնի դողով,
Մամուռ կդառնա մամռած մի քարի...
Եվ ուզում է, որ թեկուզ մի օրով
Իրենով աշնան կյանքը երկարի:



եղյամ - խոտի վրա (գետնին) նստած ասեղանման սառցային բյուրեղիկներ
համառել - չզիջել
մամուռ - քարերին, ծառերին և այլուր աճող անարմատ բույս
մամռած - մամուռով ծածկված

Դո՛ւրս գրիր այն երկտողը, որում սառնություն, ցուրտ կա:

_____

_____

Ի՞նչ կդառնա տերևը, երբ ընկնի ծառից: Դո՛ւրս գրիր համապատասխան տողը:

_____

Փորձիր բացատրել՝

Եվ ուզում է, որ թեկուզ մի օրով
Իրենով աշնան կյանքը երկարի:

_____

_____

_____

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՏԵՐԵՎԸ

Ոզնի

Դու, իհարկե, գիտես, որ ոզնին փշեր ունի: Էլ ի՞նչ գիտես նրա մասին:



Ոզնին բույն չի շինում, հանգստանում է թփերի տակ, ծառերի բներում առաջացած փչակներում, տերևների մեջ. կծիկի նման կծկվում է ու քնում:

Սովորաբար որսի է դուրս գալիս մութն ընկնելուց հետո: Գարնանը երբ շատ սոված է լինում, ցերեկն էլ է կեր փնտրում:

Ձմռանը ոզնին քնում է: Արթնանում է վաղ գարնանը՝ շա՜տ նիհարած ու սոված, կողքի փշերն էլ՝ կախված:

Ոզնու ձագերը կույր են ծնվում, փշեր էլ չեն ունենում: Ծնվելուց մի քանի ժամ հետո փշերը հայտնվում են: 16 օր հետո բացվում են աչքերը, եւ ձագերը սկսում են տեսնել: Նրանք մի ամիս միայն մոր կաթն են ուտում:

ՄՇԱԿՈՒՄԸ՝
ԱՐՈՒՅՅԱԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ

ՉԱՓԱՐԾԻՏ

Թռչուններին թագավոր պիտի նշանակվեր: Աստված ասաց.

- Թռչուններից ով շուտ հասնի ինձ մոտ, նրան կկարգեմ թագավոր:

Արծիվը լայն բացեց թևերը և թռավ երկինք: Թռա՜վ, թռա՜վ, ետ դարձավ նայեց, տեսավ՝ ոչ մի թռչուն չի երևում:

- Է՜, ես շա՜տ եմ առաջ,- ասաց Արծիվը,- ցած իջնեմ, փոքր-ինչ հանգստանամ:

Իջավ բարձր լեռան գագաթին, նստեց սառն աղբյուրի ակին, լվացվեց, ջուր խմեց:

Արծվի թևի տակից աննկատ դուրս թռավ մի թռչնակ, թևին տվեց, վեր բարձրացավ, շնչակտուր իրեն գցեց Աստծու մոտ և չրթչրթաց.

- Ես եկա, ես առաջի՛նը եկա:

- Դու ո՞վ ես, ինչո՞ւ ես եկել:

- Եկել եմ, որ դառնամ թագավոր:

- Քեզանից հետո թռչուն կա՞ եկող:

- Կարծեմ՝ Արծիվը,- մտաբերեց ծիտը:

- Հա՜,- ասաց Աստված,- շա՜տ ես ճարպիկ ու խելոք, իսկ և իսկը՝ թագավոր:

Աստված շոյեց ծտի ուսերը ու շարունակեց.

- Դե՛, հիմա գնա՛ ու բե՛ր մի ճիպոտ,
Որ ո՛չ կարճ լինի
Եվ ո՛չ էլ՝ երկար,
Որ ո՛չ ծուռ լինի
Եվ ո՛չ էլ՝ ուղիղ:

- Ճիպոտն ի՞նչ է որ,- չրթչրթաց թռչնակն ու դարձավ եկած ճանապարհով: Աչքին երևում էին ծանոթ ցանկապատեր, ուր այնքա՜ն ճիպոտ կար: Եվ էդ օրվանից ծիտը թռչում է ցանկապատից ցանկապատ, մեկ-մեկ վերցնում է ճիպոտները, նայում, չրթչրթացնում.

- Չի՛, չի՛, է՛ս չի, է՛ն չի,
Չի՛, չի՛, էս իսկի՛ չի:

Թե որ գտնի Աստծու ասած ճիպոտը, կդառնա թռչունների թագավոր:

Ու դեռ այսօր էլ ցանկապատի տակ փոքրիկ մի թռչնակ՝ ուսերը ճերմակ, ճիպոտ է փնտրում ու չրթչրթում.

- Չի՛, չի՛, է՛ս չի, է՛ն չի,
Չի՛, չի՛, էս իսկի՛ չի:

Չափարծիտն է:

կարգել - նշանակել
ակ - այն տեղը, որտեղից դուրս է գալիս (բխում է) աղբյուրի ջուրը
չրթչրթալ - թռչնային ձայն հանել
շնչակտուր - շունչը կտրվելով
չափար - ցանկապատ
թևին տալ - թռչել

Լրացրո՛ւ.

Արծիվը _____ *թևերը և թռավ երկինք:*

Իջավ _____ *գագաթին, նստեց* _____ *ակին, լվացվեց, ջուր խմեց:*

Քո կարծիքով ինչո՞ւ Աստված Չափարծտին թագավոր չկարգեց:

_____

_____

_____

_____

Ի՞նչ կմտածի Արծիվը, երբ իմանա Չափարծտի արարքի մասին:

_____

_____

_____

ԻՆՉՊԵ՞Ս ԱՐԾԻՎԸ ԴԱՐՁԱՎ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ

ճնճղուկն ու Արծիվը

- Թեև իմ ձագուկները ճնճղուկներ են, Արծի՛վ, բայց տասն են:
- Իսկ ես, ճնճղուկ, թեև մի զավակ ունեմ, բայց Արծիվ է:
- Է՜յ, Արծվիկ, ովքե՞ր են քո ծնողները:
- Արծիվներ են իմ ծնողները:
- Մ՜յ քեզ երջանի՜կ... Իսկ իմ ծնողները սովորական ճնճղուկներ են:
- Մի՛ նախանձիր, փոքրի՛կ ճնճղուկ: Քո ծնողները առավոտից իրիկուն
կերակրում են քեզ, իսկ իմ արծիվները՝ միայն առավոտյան ու երեկոյան:

Սովորաբար քանի՞ ձագ են ունենում արծիվները.

Արծիվները _____.

Արծիվներն ու ճնճղուկները իրենց ձագերին ինչպե՞ս են կերակրում. շարունակի՛ր.

ճնճղուկները իրենց ձագերին կերակրում են առավոտից _____.

Արծիվները իրենց ձագերին կերակրում են _____

_____

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

ՓԱՓՈՒԿ ՁՅՈՒՆ

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Զգույշ իջի՛ր աշխարհին,
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին:

Հանդարտ, կամաց իջի՛ր, այնպես՝
Ծաղիկները չարթնանան,
Ծածկի՛ր նրանց քնքուշ ու հեզ,
Զգո՜ւյշ, զգո՜ւյշ անսահման:

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Հանգիստ, խաղաղ իջի՛ր վար,
Ծաղիկները մտել են քուն,
Ծաղիկները ցրտահար:

հանդարտ - խաղաղ, հանգիստ, մեղմ
հեզ - մեղմ, քնքուշ, նրբին
վար - ներքև
ցրտահար - ցրտից վնասված, ցուրտը տարած

Էջը ի՛նքդ ձև ավորիր:

Ձյունն ինչպե՞ս է իջնելու աշխարհին. լրացրո՛ւ:

Նմուշ՝
Հանդարտ, կամաց իջի՛ր, այնպես՝
Ծաղիկները չարթնանան:

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտակ ձյուն,

_____

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտակ ձյուն,

_____

Իսկ ձյունն ինչպե՞ս է ծածկելու ծաղիկներին.

Ծածկի՛ր նրանց

_____

Ինչպիսի՞ տրամադրություն է արտահայտված բանաստեղծության մեջ՝ ընդգծի՛ր.

խաղաղ - անհանգիստ
ուրախ - տխուր
բարի - չարացած

Փորձի՛ր նկարագրել ձյունը (ինչպիսի՞ն է, ի՞նչ գույնի է, ինչի՞ է նման, որտեղի՞ց է գալիս, ինչպե՞ս է իջնում, ի՞նչ է անում, ի՞նչ է լինում իջնելուց հետո):

Ինչի՞ց է առաջանում ձյունը

Ձյան փաթիլը գեղեցիկ է, չէ՞: Երբ այդ փաթիլը տաքությունից հալչում է, ջուր է դառնում: Մտածե՞լ ես, թե ինչից է առաջանում ձյունը:

Դու երևի գիտես, որ ամպը կազմված է ջրի մանր կաթիլներից: Այդ կաթիլները կարող են անձրև կամ ձյուն դառնալ և թափվել երկնքից:

Եթե եղանակը ցուրտ չէ, կաթիլները անձրև են դառնում: Ցուրտ եղանակին կաթիլները վերածվում են փաթիլների:

Ճիշտ պատասխաններն ընդգծի՛ր.

ա) Ինչպիսի՞ն է ձյան փաթիլը.
փափուկ, սպիտակ, սառը, կոպիտ, գեղեցիկ, տաք, քնքուշ, նուրբ, թաց:

բ) Ինչի՞ց է առաջանում ձյան փաթիլը.
ամպից, արևից, ջրի կաթիլներից, լուսնից:

Ջրի կաթիլները երկնքում ե՞րբ են ձյան փաթիլներ դառնում.

երբ շոգ է
երբ եղանակը տաք է
երբ ցուրտ է:

Տրված բառերն ու արտահայտությունները համապատասխան տեղերում գրի՛ր.

կատաղել, կանաչել, իր գործով զբաղվել, կծկվել

կանաչ հագնել _____

սաստիկ բարկանալ _____

կուչ գալ _____

իր գործին գնալ _____

Բացատրի՛ր.

ցրտահար լինել _____

ձայն տալ _____

սառույցով կապել գետերը _____

ձյունով բռնել _____

դանակի պես սուր քամի _____

Շարունակի՛ր թվել ձմռան օգնականներին.

դանակի պես սուր քամի, սառցե սրեր, _____

_____

_____

Ինչպիսի՞ն է այս պատմության ձմեռը մարդկանց, կենդանիների, թռչունների կարծիքով.

անպիտան *ձմեռ*

_____ *ձմեռ*

_____ *ձմեռ*

Գրի՛ր, թե այս պատմության մեջ գարունն ինչպես եկավ:

_____

_____

_____

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ



Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն էլ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզ:

Ցմեռը էս աղքատ հողագործի եզները սատկում են: Գարունքը, վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, եզ չի ունենում թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին:

Էս հարևանը վարելու ժամանակ խուփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալիս մի կարաս, մեջը լիքը ոսկի: Եզները լծած թողնում է, վազում է գյուղ՝ հողատիրոջ մոտ:

- Հե՜յ, աչքդ լուս,- ասում է,- քու հողում մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տար:

- Չէ՛, ախպե՛ր, էդ իմը չի,- պատասխանում է հողատերը: - Հողի վարձը դու տվել ես, դու վարում ես, էն հողում ինչ էլ դուրս գա, քոնն է, ոսկի է դուրս եկել, թող ոսկի լինի, էլի քոնն է:

Սկսում են վիճել. սա ասում է՝ քոնն է, նա, թե չէ՝ քոնը: Վեճը տաքանում է, իրար ծեծում են: Գնում են թագավորի մոտ գանգատ:

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ՝ աչքերը չորս է բաց անում: Ասում է.

- Ոչ քոնն է, ոչ դրանը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել՝ իմն է:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է կարասի բերանը բաց անել է տալիս, տեսնում՝ ի՞նչ ոսկի - կարասը լիքը օձ...

Զարհուրած ու կատաղած ետ է գալիս: Հրամայում է՝ պատժեն անգետ ռանչպարներին, որ համարձակվել են իրեն խաբել:

- Չէ՛, թագավորն ապրած կենա,- գոռում են խեղճերը,- մեզ ինչո՞ւ ես սպանում. լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկ գնում են, ետ գալիս, թե՝ ճշմարիտ, ոսկի է:

- Վա՜հ,- զարմանում է թագավորը: Ասում է.

- Երևի լավ չտեսա, կամ տեսածս էն կարասը չէր:

Վեր է կենում մին էլ գնում:

Կարասը բաց է անում՝ դարձյալ մեջը լիքը օձ:

- Էս ի՞նչ հրաշք է, ի՞նչ միտք ունի,- չեն հասկանում:

Թագավորը հրամայում է, հավաքում է իր երկրի իմաստուններին:

- Բացատրեցեք,- ասում է,- ո՛վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա: Էս հողագործներն իրենց հողում կարասով ոսկի են գտել: Ես եմ գնում՝ կարասը լիքն օձ է դառնում, սրանք են գնում՝ ոսկի: Էս ի՞նչ կնշանակի:

- Դրա բացատրությունն էս է, թագավո՛ր, եթե չես բարկանա,- ասում են ի-

մաստունները: - Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի գտնում, իսկ երբ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում:

Թագավորը ցնցվում է, խոսք չի գտնում պատասխանելու:

- Լա՛վ,- ասում է,- դե հիմի էն որոշեցեք, թե էդ երկուսից որի՞ն է պատկանում գտած ոսկին:

- Իհարկե հողատիրոջը,- ձայն է տալիս վարող գյուղացին:

- Չէ, վարողինն է,- մեջ է մտնում հողատերը: Ու նորից սկսում են կռվել:

- Լա՛վ, լա՛վ, կացե՛ք,- կանգնեցնում են իմաստունները,- ի՞նչ ունեք դուք՝ տղա կամ աղջիկ:

Դուրս է գալիս, որ մեկը մի տղա ունի, մյուսը՝ մի աղջիկ: Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց: Էստեղ համաձայնում են բարի մարդիկ, ուրախանում են, ու կռիվը վերջանում է, սկսում է հարսանիքը: Օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարգև էր ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին:

Բարին էստեղ, չարը էն ագահ թագավորի մոտ:

մի օրավար հող - *մեկ օրում վարելու հող*
զարհուրած - *սարսափած*
ռանչպար - *հողագործ*
ղրկած - *ուղարկած*
դուրս է գալիս - *պարզվում է*
մի լուծ եզ - *մի զուգանով վար անող եզներ*
պարգև - *նվեր, ընծա*
հափշտակել - *խլել, գողանալ*

Ընդգծված բառերի կողքին իմաստով մոտ այլ բառեր գրի՛ր:

Կարասով ոսկին աղքատ հողագործներին ցվեր (_____) է ուղարկված իրենց ագնվության ու ազնիվ (_____) աշխատանքի համար:

Երբ դու ես գնում, գնում ես որիշի բախտը խլելու (_____):

Շարունակի՛ր՝ ինչպես նմուշում է արված:

Նմուշ

Խոփը մի բանի է դիպչում: - *Խոփը դեմ է ընկնում մի բանի:*

Վեճը սաստկանում է: - *Վեճը տաքանում է:*

Գնում է բազավորին բողոքելու: - _____

Հրամայում է՝ պատժել անգետ հողագործներին: _____

_____

Վերնագրի՛ր կարասի պատմածը:

_____

Չեմ հիշում քանի տարի էի մնացել հողում: Մի օր ինչ-որ բան ինձ դեմ առավ: Ասացի՝ լավ է, հիմա ինձ հողից կհանեն: Այդպես էլ եղավ, մի գյուղացի ինձ հանեց ու բողեց գնաց:

Մեկ էլ տեսնեմ մի բազավոր եկավ, նայեց ինձ, գույնը գցեց ու հեռացավ: Երևի ոսկիներս նրան դուր չեկան:

Հիմա ի՞նքդ շարունակիր կարասի անունից պատմել:

_____

_____

_____

_____

_____

_____

Շնորհավորի՛ր գյուղացիներին նրանց զավակների ամուսնության առթիվ:

_____

_____

Եթե ուզում ես շախմատ խաղալ սովորել, հետաքրքիր պատմություններ կարդալ այդ հրաշալի խաղի մասին, ուրեմն պիտի ունենաս Թևան Դավթյանի «Սովորենք շախմատ խաղալ» գրքերը

(չորս գիրք)։

ՍՈՎՈՐԵՆՔ ՇԱԽՄԱՏ ԽԱՂԱԼ

Դարեր առաջ Հնդկաստանում մի երիտասարդ թագավոր կար: Նրա անհոգությունն ու ծուլությունը չափ ու սահման չկար: Երիտասարդ թագավորը նաև մեծամիտ էր ու ինքնահավան: Դա էր պատճառը, որ իմաստուն պալատականները կամաց-կամաց լքեցին նրան: Թագավորը մնաց միայնակ ու դժբախտ, օր օրի հյուծվեց անկողին ընկավ: Պալատում մնացած վերջին իմաստունը, հասկանալով, որ չարությունից չէ թագավորն ամբարտավան, այլ անխելքությունից, որոշեց նրան բուժելու ճար գտնել: Երկար, շատ երկար խորհելուց հետո ներկայացավ թագավորին ու այսպես դիմեց.

- Արքա, ես գտել եմ քեզ բուժելու հնարը. դա մի կախարդական խաղ է: Նա, ով իմանա այդ խաղի բազում գաղտնիքները, ձեռք կբերի արքային վայել իմաստնություն, ժողովրդի առաջնորդին անհրաժեշտ հոգու հարստություն, փառք եւ ուրախություն:

Հիվանդ արքայի հետաքրքրությունը շարժվեց, գունատ դեմքին կենդանություն զգացվեց:

- Սա մի անարյուն պատերազմի դաշտ է,- վստահ ու խորհրդավոր շարունակեց ծերունին: - Այստեղ կան ճանապարհներ, անտեսանելի բլուրներ, ճեղ ու աննշմարելի կածաններ, գետեր ու կամուրջներ...

Թագավորի հետաքրքրությունը գնալով մեծանում էր, իսկ ծերունին պատմում էր ու պատմում: Երիտասարդ արքան կլանված նայում էր մերթ նրա դեմքին, մերթ տախտակին, փորձում հասկանալ ու ճանաչել խաղաքարերի աշխարհը, որը քիչ էր տարբերվում մարդկանց աշխարհից, իր թագավորությունից: Տախտակի վրա արքան տեսնում էր իրեն, իր ողջ թագավորությունը, փորձում կռահել հակառակորդի մտադրությունները: Եվ այստեղ նա տարսռեց հասկանալով իր վարած կարճամիտ ու անհեթեթ քաղաքականությունը: Չէ՞ որ պետության մեջ ամեն մեկը, ինչպես յուրաքանչյուր խաղաքար շախմատի խաղատախտակի վրա, իր տեղն ու դերն ունի և ուշադրություն ու հարգանք է պահանջում:

... Եվ այսպես ծերունին կարողացավ հիվանդ արքային բուժել, խաղն էլ արագ տարածվեց երկրով մեկ...

Դարեր անցան այդ օրերից: Շախմատը շատ երկրներ ճամփորդեց: Ստեղծագործական այս խաղը յուրաքանչյուր խաղացողի իր ունակությունները դրսևորելու անսահման հնարավորություններ է տալիս:

ԿԻԿՈՍԻ ՍԱՀԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ:

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկան ջուրն է դրկում: Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը: Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝ իրեն-իրեն միտք է անում.

- Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս. Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի...

- Վա՜յ, Կիկոս ջան, վա՜յ...

Տեղն ու տեղը ծառի տակին նստում է՝ սկսում է սուգ անել.

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր եկավ ծառին,
Յաղ ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկավ, միջնեկ աղջկանն է դրկում: Ասում է. - Գնա մի տե՛ս, քույրդ ընչի՞ ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան որ հեռվից տեսնում է՝ ձենն ավելի է բարձրացնում:

- Արի՛, արի՛, անբախտ մորքուր, տես քու Կիկոսն ինչ եղավ:

- Ի՞նչ Կիկոս:

- Բա չես ասի՝

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր եկավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

- Վա՜յ, Կիկոս ջան, վա՜յ,- գոռում է միջնեկ քույրը, նստում է մեծ քրոջ կողքին ու սկսում են միասին սուգ անել:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկան, պստիկ աղջկանն է ղրկում: Ասում է.

- Աղջի՛, մի գնա տե՛ս քույրերդ ի՞նչ եղան: Գնացին ետ չեկան:

Հիմի պստիկ աղջիկն է գնում: Գնում է տեսնում՝ երկու քույրերն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում:

- Քա՛, ընչի՞ եք լաց ըլում:

Մեծ քույրը թե՝ բա չես ասի՝

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր եկավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

- Վա՜յ քու մորքուրին, Կիկոս ջան, վա՜յ,- սա էլ է գլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն-ձենի տալիս:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է աղջիկները չեկան, ինքն է գնում: Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ՝ երեք աղջիկն էլ կանչում են.

- Արի՛, արի՛, անբախտ տատի, տե՛ս թոռանդ գլխին ինչ է եկել:

- Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել:

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ մեր՝

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,

Անունը Կիկոս.
Վեր եկավ ծառին,
Յած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

- Վա՜յ քոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան, - մերն էլ ծնկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել:

Մարդը տեսնում է կնիկն էլ գնաց աղջիկների ետևից ու սա էլ չեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ՝ էս ինչ պատահեց, որ սրանք իրար ետևից գնացին մնացին աղբրում:

Վեր է կենում գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի.

- Արի՛, արի՛, անբախտ պապի, արի տես քու Կիկոսի գլուխն ինչ է եկել... վա՜յ քու Կիկոսին...

- Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում,- զարմանում է մարդը:

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ հեր՝

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր եկավ ծառին,
Յած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

- Վա՜յ, Կիկոս ջա՜ն,- ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք:

Սրանց միջի խելոքը հերն է լինում: Ասում է.

- Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք նստել էստեղ ու սուգ եք անում: Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի: Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք. լացով ի՞նչ պետք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:

Դու մի՛ ասիլ՝ սրանց ունեցած-չունեցած չորսոտանին մի եզն է լինում, ունեցած փոշին էլ մի քթոց ալյուր:

Գալիս են էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են:

դրկել - ուղարկել
քթոց - բարակ ճյուղերից հյուսված զամբյուղ

Ընտրի՛ր փակագծերում գրված բառերից ու արտահայտություններից մեկը, գրի՛ր իր տեղում:

_____ *մի բարձր ծառ է լինում:*
(աղբյուրի մոտ, աղբյուրի գլխին)

_____ *ծառի տակին նստում է, սկսում սուգ անել:*
(իսկույն, տեղնուտեղը)

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը տեսնում են թե չէ, _____
(կանչում են, ձեն են տալիս)

Արի՛, արի՛, անբախտ պապի, տես քո Կիկոսի _____
(ինչ է պատահել, գլուխն ինչ է եկել, ինչ փորձանք է պատահել)

_____ *, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:*
(կյանքն է այդպիսին, աշխարհքի կարգ է, ինչ արած)

Նամակ գրի՛ր Կիկոսի հարազատներին:

_____

_____

_____

_____

Փորձի՛ր հետաքրքիր պատմություն հորինել.

Ա՜Յ ՔԵԶ ՉԱՐՄԱՆԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ...

_____

_____

_____

_____

_____

_____

Մեր մարմինը

Մեր մարմինը մի անսովոր մեքենա է՝ կենդանի մեքենա, որ տեսնում է, լսում, զգում, խոսում, շարժվում, մտածում, խնամում ինքն իրեն և նույնիսկ բազմանում...

Բջիջ

Մեր մարմինը բաղկացած է անթիվ - անհամար բջիջներից: Դրանք շա՜տ-շա՜տ փոքր մասնիկներ են, որոնք կարող ենք տեսնել միայն հատուկ սարքով՝ մանրադիտակով:

Բջիջները շնչում են, սնվում, աճում, շատանում (բազմանում), ծերանում են ու մահանում:

Մահացած բջիջների փոխարեն նոր բջիջներ են «ծնվում»: Յուրաքանչյուր բջիջ արյունից սնունդ ու թթվածին է վերցնում, իսկ ոչ պիտանի նյութերը տալիս է արյանը:

Թթվածինը օդի մեջ եղած տարբեր գազերից մեկն է: Առանց թթվածնի երկրի վրա կյանք չի լինի:

Տարբեր բջիջների մեջ տարբեր գույնի նյութեր կան: Դրանք գունանյութերն են:

Եթե մազերի բջիջների գունանյութը սև է, ուրեմն մազերը սև են:

Այդ գունանյութերից է, որ մարդիկ սևամորթ, սպիտակամորթ կամ կարմրամորթ են լինում:

Ուզո՞ւմ ես իմանալ որ կենդանիներին են կաթնասուն անվանում, ինչո՞վ են նրանք տարբերվում մյուսներից:

Կմախք, մազածածկույթ, տաքարյուն, կրծքով կերակրվել. այս հատկանիշները բնորոշ են կաթնասուններին:

Մարդ արարածն էլ կենդանակարգ աշխարհի այս տեսակին է պատկանում:

Կաթնասունները չեն կարող ապրել առանց թթվածնի: Ջրերի խորքերում բնակվող կաթնասունները, օրինակ՝ կետերը, պետք է մերթընդմերթ բարձրանան վերև՝ մակերես, և իրենց թոքերը լցնեն օդով:

Կաթնասունների ծնողները սովորաբար չեն լքում իրենց ձագերին, խնամում, պաշտպանում են նրանց երբեմն երկար տարիներ:

Շարունակությունը կարող եք կարդալ «Իմ առաջին հանրագիտարանի» 22-րդ էջում:

Ուզո՞ւմ ես իմանալ քո բազմաթիվ ինչուների պատասխանները: Կարող եմ օգնել մի զարմանալի գիրք կա, կոչվում է «Իմ առաջին հանրագիտարանը»: Այդ գիրքը հենց քեզ համար է:

ՉԱՐԻ ՎԵՐՋԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փչակ,
Փչակում մի բուն,
Բնում երեք ձագ,
Ու վրեն Կկուն:
- Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկունե՛ր,
Ե՞րբ պիտի դուք առնեք թևեր,
Թռչե՞ք, գնաք,
Ուրախանաք...
Երգում էր մարիկ Կկուն,
Մին էլ, ըհը՛, Աղվեսն եկավ:
- Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն:
Ախ դու Կկու, հիմա՛ր Կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
- Երեք հատ ձագ, աղա՛ Աղվես:
- Երեք հատ ձագ ցույց կտամ քեզ:
Ու չե՞ս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա դրկես ինձ մոտ:
Ձգիր շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հրեն սրած,
Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...
- Վա՛յ, չկտրես,
Աստված սիրես,
Էս մինն ահա
Տար քեզ ծառա,
Միայն թե էդպես
Մի ջնջիր մեզ
Բնով-տեղով,
Ամբողջ ցեղով:
Խնդրեց մարիկ Կկուն ու ձագերից մի-
նը ձգեց ներքև:



Աղվեսը՝ հափ, առավ գնաց:
Վայ-վա՜յ, դու-դո՜ւ,
Իմ լավ կուկու.
Ո՞ր սև սարում,
Ո՞ր անտառում,
Ո՞ր թփի տակ
Կորար մենակ...
Վայ-վա՜յ, դու-դո՜ւ,
Իմ խեղճ կուկու...
Լաց էր լինում մարիկ Կկուն, մին էլ, ըհը՛, Աղվեսը ետ եկավ:
- Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն:
Ախ դու Կկու, հիմա՛ր Կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
- Երկու հատ ձագ, աղա Աղվես:
- Երկու հատ ձագ ցույց կտամ քեզ:
Ախ, չարամիտ դու ավազակ,
Ի՜նչ խաբար է, երկո՜ւ հատ ձագ.
Ի՜նչ, ուզում ես էստեղ զոռով
Լցնես ամբողջ կկուներո՞վ...
Չգիր շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հրեն սրած.
Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...
- Վա՜յ, չկտրես,
Աստված սիրես,
Էս էլ առ տար,
Ու թող դաղար՝
Վերջինը գեր
Մնա ինձ հետ...
Աղաչեց մարիկ Կկուն ու երկրորդ ձագն էլ ձգեց ներքև:
Աղվեսը՝ հափ, էս էլ առավ ու գնաց:
- Վայ-վա՜յ, վույ-վո՜ւյ,
Ընչի՞ համար
Եկա ես սար,
Բուն չինեցի,
Ձագ հանեցի...
Աղվեսն եկավ,
Տարավ, կերավ,
Երկու, երկու,
Կուկու... կուկու...
Լաց էր լինում մարիկ Կկուն:
Էս միջոցին - դա՜, դա՜, դա՜, Ագռավն անց էր կենում էն կողմերով: Լսեց Կկվի լացի ձայնը:
- Էդպես տխուր ու զարհուրիկ
Ի՞նչ ես լալիս, Կկու քուրիկ:
- Ինչպես չլամ, ա՛ սանամեր.
Աղվեսն եկավ էն սրտամեռ,
Գլխիս էսպես փորձանք բերավ,
Ձագուկներս տարավ, կերավ:
- Վո՜ւյ իմ աչքին, անխելք Կկու,
Ինչպես իզուր խաբվել ես դու
Սուտ խոսքերից չար Աղվեսի:
Ո՜նց թե սարը իմն է՝ կասի:
Ո՞վ է տվել էն լրբին սար.
Սարն ամենքիս է հավասար...
Ո՞վ կթողնի վեր կենա նա
Ամբողջ սարին գա տիրանա,
Անունը տա սրած կացնի,
Սրան-նրան սուտ վախեցնի,
Ու մինն էսօր, մյուսը երեկ,
Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...
Սև գրողի էն տարածին
Ո՞վ է տվել սրած կացին:
Մին էլ որ գա ու սպառնա,
Մի՛ վախենա, քշի գնա:
Էսպես ասավ Ագռավն ու թռավ գնաց:
Ահա կրկին Աղվեսն եկավ:
- Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է...
Հազիվ էր ասել, Կկուն քնից գլուխը հանեց.
- Սուտ ես ասում, դու խաբեբա,

Անխիղճ գազան, անկուշտ, ագահ:
Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,
Սարն ամենքիս է հավասար:
Ի՞նչ ես եկել սուտ տեր դարձել,
Ես էլ հիմար՝ ճիշտ եմ կարծել,
Ձագուկներս տվել եմ քեզ...
Կորի՛, գնա, դու չար Աղվես,
Հերիք ինչքան սուտ ես ասել,
Հիմի գիտեմ, չեմ վախում էլ.
Կացին չունես ծառը կտրես:
- Ո՞վ ասավ քեզ:
- Ագռավն ասավ:
- Ագռա՞վը, լա՜վ:
Ու Ագռավի վրա բարկացած Աղվեսը պոչը քաշեց,
հեռացավ: Գնաց մի դաշտում սուտմեռուկի տվավ,
վեր ընկավ, իբրև թե սատկել է: Ագռավն էլ կարծեց՝
իրավ սատկել է, թռավ եկավ վրեն իջավ, որ աչքերը հանի: Աղվեսը՝ հա՛փ, հանկարծ բռնեց:
- Ղա՜ - ղա՜ - ղա՜ - ղա՜,
Աղվես աղա...
- Ա՛յ դու կռավան չարալեզու,
Ո՞նց թե Կկվին ասել ես դու,
Թե ես կացին չունեմ սրած...
Կացին չունե՜մ... դե հիմի կա՛ց...
- Վայ, քեզ մեղա,
Աղվես աղա,
Ես եմ ասել, չեմ ուրանում,
Ինձ քրքրի, ինձ կեր հում-հում,
Տո՛ւր, ինչ պատիժ սիրտդ կուզի,
Բայց մի վերջին խոսքս լսի:
Ես էն սարում, հենց դեմուդեմ,
Էնպես մի թանկ պահուստ ունեմ,
Որ չես գտնի դու քո օրում
Ոչ մի թառում կամ անտառում:
Ընչի՞ համար էն ահագին
Գանձը կորչի հողի տակին:
Արի գնանք. հանեմ տամ քեզ,
Էնքան ուտե՜ս, էնքան ուտե՜ս...
Թե չլինի ու սուտ դուրս գամ,
Ես հո էստեղ միշտ կամ ու կամ...
- Գնա՜նք, ասավ Աղվեսը: Թե կլինի, շատ լավ, թե չի լինի, էլի քեզ կուտեմ:
Գնացին:
Վերևից թռչելիս Ագռավը նկատել էր, որ մի թփում պառկած էր գյուղացու շունը: Աղվեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ էն թփի վրա:
- Ա՛յ, ասեց, էս թփումն է իմ պահուստը:
Աղվեսն ագահ վրա ընկավ թփին. շունը վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին: Աղվեսը խեղդվելով սկսեց խռխռալ.
- Ա՜խ, ե՜ս... ա՜խ, ե՜ս...
Զգույշ Աղվես,
Փորձանքի մեջ
Ընկնեմ էսպե՜ս...
Ախ՜, անիրա՜վ
Դու սև Ագռավ...
- Ինչքան էլ որ լինես զգույշ,
Չարի համար թե վաղ, թե ուշ,
Էդ է պահված, Աղվես աղա,
Ղա՜, ղա՜, ղա՜, ղա՜...
Պատասխանեց Ագռավն ու թռավ:

փչակ - *ծառի բնի մեջ առաջացած խոռոչ*
տիրանալ - *ուժով տեր դառնալ*
չարամիտ - *չար մտքեր ունեցող*
սպառնալ - *վախեցնել, ահ տալ*
գեթ - *գոնե*
էս միջոցին - *այդ ժամանակ*
զարհուրիկ - *վախեցած, վախվորած*
իրավ - *ճիշտ, իսկապես*
կռավան - *կոկռան*
չարալեզու - *չար լեզու ունեցող, չարախոս*
պահուստ - *նեղ օրվա համար պահված բան*
պոչը քաշել - *թողնել հեռանալ*

Գրի՛ր այնպես, ինչպես «Չարի վերջում» է.

Էս ո՞վ է եկել, տեր դարձել բարուն...

Մին էլ որ գա ու վախեցնի...

Մեկ գրողի էն տարածին
Որտեղի՞ց սրած կացին...

Վերջինը զոնե մնա ինձ հետ...

Աղվեսի խոսքերում Կկուն ինչպիսի՞ն է. գտի՛ր և գրի՛ր այդ հատվածները:

Նմուշ
Ու չես ասել, դո՛ւ, անամոթ.

Քո կարծիքով ինչպիսի՞ն է աղվեսը. ինչո՞ւ ես այդպես կարծում:

Եթե հանդիպես Կկվին, ի՞նչ կասես:

Ի՞նչ ես կարծում՝ այս պատմության մեջ աղվեսն ինչո՞ւ պատժվեց (հիշի՛ր վերնագիրը՝ «Չարի վերջը»):

Խորհուրդ տուր աղվեսին:

Թռչնի ձագերը

Ի՞նչ գիտես թռչունների և նրանց ձագերի մասին:

Մայր թռչունը մեկ կամ մի քանի ձու է ածում և թուխս նստում:

Պատահում է այնպես, որ հայր ու մայր թռչունները հերթով են թուխս նստում: Որքան մեծ է թռչունը, այնքան երկար ժամանակ է թուխս նստում:

Ձագուկները կտուցով ճեղքում են ձուն և ինքնուրույն դուրս գալիս նրա միջից:

Մայրն ու հայրը օրը մի քանի անգամ իրենց կտուցներով ուտելիք (սնունդ) են բերում ձագուկների համար:

Ծնողները ցրտին տաքացնում են ճտերին, պաշտպանում անձրևից, այրող արևից, թշնամիներից:

Երբ ձագերը քիչ մեծանում են, ուժ հավաքում, ծնողները նրանց թռչել են սովորեցնում:

Միայն կկուն է անհոգ ապրում՝ բույն չի հյուսում, թուխս չի նստում, չի խնամում ձագերին: Նա իր ձվերը գցում է տարբեր թռչունների բների մեջ, ու՝ ոչ մի հոգս: Հենց որ կկվի ձագը ձվից դուրս է գալիս, սկսում է «տանտիրոջ» ձվերը բնից դուրս գցել, որ իր կերը շատ լինի: Գիտե՞ս ինչ շատակերն է կկվի ձագը: Կարճ ժամանակում նա «խորթ» ծնողներից ավելի խոշոր է դառնում:

Իսկ «խորթ» ծնողները այդպես էլ չեն իմանում, որ իրենք ուրիշի ձագին են կերակրում, շահում-պահում:

Այ քեզ կկու՜...

Քանի՞ ձագ են ունենում թռչունները:

_____

Թռչնի ձագերը ինչպե՞ս են ձվից դուրս գալիս:

_____

_____

Թռչուններն ինչպե՞ս են կերակրում ձագերին:

_____

_____

Թռչուններն ինչպե՞ս են խնամում ձագերին:

_____

_____

_____

_____

ՅՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄՈՒԿԻԿԻ ՄԱՀԸ

Ծիտիկն ու Մուկիկն ախպերացան:
Գետի ափին բուն շինեցին, մտան մեջը:
Մի օր Ծիտը գնաց քուջուջ անելու, ետ եկավ տեսավ Մուկիկը մեռել է: Ծնկանը զարկեց.
- Վա՜յ, ախպեր ջան, վա՜յ...
Օխտը ճամփի մեջտեղ նստեց, հողը փորեց, տվավ գլխին.
- Վա՜յ, ախպեր ջան, վա՜յ...
Ձենի վրա Լորիկն եկավ.
- Ծիտիկ-միտիկ, չալփետուրիկ,
Հողն ինչո՞ւ ես տալի գլխիդ:
- Թառ՜ւ, թառ՜ւ, - ասաց Ծիտը,-
Ես որ չտամ, ո՞վ տա հապա.
Մուկիկի պես ախպեր մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր,
Ես որ հողը տամ իմ գլխին,
Մե՞ծ բան է...

- Ափսո՛ս, ափսո՛ս,- ասավ Լորը,-
Մուկիկի պես մարդը մեռավ,-
Ասավ, իրեն էնքան զարկեց,
Թևը կոտրեց կախ արավ:
Ծառը ասավ.
- Լորիկ քուրիկ, ճտճտուրիկ,
Ինչո՞ւ ես մի թևդ կոտրել:
- Բա ի՞նչ անեմ, որ չկոտրեմ:
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր.
Ծիտը գլխին հող է տալի,
Ես որ իմ մի թևը կոտրեմ՝
Մե՞ծ բան է...
- Ախ-վա՛խ, ախ-վա՛խ, - կանչեց ծառը.
Մուկիկի պես մարդը մեռնի՞...
Գնաց եկավ, գնաց եկավ,
Իր ճյուղերը զարկեց իրար,
Ջարդեց, մնաց ճղնակոտոր:
Քարերն ասին.
- Ծառիկ-մառիկ, կանաչ թառիկ,
Ճյուղերդ ինչո՞ւ վեր թափեցիր:
- Վա՛հ, ձեր տունը Աստված շինի,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր.
Ծիտիկն էնտեղ հողը գլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Իմ ճյուղերը ես որ թափեմ՝
Մե՞ծ բան է...
- Հազար ափսո՛ս,- քարերն ասին.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Ու գոռալեն, գոգռալեն
Գլորվեցին սարերն ի վար,
Թափվեցին ցած՝ ջրերի մեջ:
Ջրերն ասին.
- Ի՞նչ պատահեց, ա՛յ գիժ քարեր,
Չէ՞ դուք ձեր տեղն անժաժ էիք,
Ի՞նչ եք էդպես ցած գլորվում:
Էլ ի՞նչ անժաժ. բա չե՞ք ասիլ,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր.
Ծիտիկն էնտեղ հողը գլխին,
Լորիկն իրեն թևը կոտրած,
Ծառը մնաց ճղնակոտոր,
Մենք մեր տեղից որ գլորվենք՝
Մե՞ծ բան է...
- Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ, ի՞նչ իմացանք,
Մուկիկի պես մարդն էլ մեռնի՞...
Ջրերն ասին. խառնվեցին,
Ու գնացին պղտոր-մղտոր:
Էն կողմերից տմբտմբալով
Պառավն եկավ: Էս որ տեսավ.
- Ա՛յ գլգլան ջրեր,- ասավ,
Դուք պարզ էիք միշտ ու մարմանդ,
Ինչո՞ւ էսօր պղտորվեցիք:
- Վա՛յ քու տունը քանդվի, պառա՛վ,
Բա չե՞ս լսել՝ ինչ է եղել.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր.
Ծիտը էնտեղ հողը գլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Ծառը եղավ ճղնակոտոր,
Քարերը ցած գլտոր-մլտոր,
Մենք պղտորվենք՝ մե՞ծ բան է...
- Հողն իմ գլխին,- պառավն ասավ,-
Մուկիկի պես մարդը մեռնի՞...
Զարկեց իրեն ու ծվատեց,
Երեսն արավ արյունվիկ,
Մազաքծուծ՝ գյուղը վազեց:
Գյուղում ասին.
- Պառավ տատիկ. ի՞նչ պատահեց,
Ինչո՞ւ երեսդ արյունվիկ:
- Վա՛յ, քոռանամ, մի՛ խոսեցնեք:
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր.
Ծիտը էնտեղ հողը գլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Ծառը եղավ ճղնակոտոր,
Քարերը ցած գլտոր-մլտոր,
Ես իմ երեսն արյունոտեմ՝

Մե՞ծ բան է...
- Ափսո՛ս, ափսո՛ս, հազար ափսո՛ս,
Որ էն տեսակ մարդը մեռավ...
Ափսոսացին էն գյուղացիք,
Սև կապեցին, սուգ նստեցին.
- Վա՜յ, ո՞վ ասավ, ո՞վ ասավ...
- Հողագլուխ Ծիտիկն ասավ,
Թևը կոտրած Լորիկն ասավ,
Ճղնակոտոր Ծառիկն ասավ,
Գլտոր-մլտոր Քարիկն ասավ,
Պղտոր-մղտոր Ջրիկն ասավ,
Մազաքծուռ Պառվիկն ասավ,
Մեր Սուկիկը մեռել է՜...
Էլ ո՞վ մնաց էս աշխարհքում,
Էլ ի՞նչ ապրենք էս աշխարհքում,
Էսպես ասին
Ու միասին
Լացով, կոծով,
Ճիչ-գոռոցով
Հավաքվեցին ու գնացին,
Քարիցն ընկան կոտրվեցին:

անժամ - անշարժ
ճղնակոտոր - ճյուղերը կոտրված
մարմանդ - մեղմ, հանդարտ, թույլ
մազաքծուռ - մազերը խառնված, գզգզված

Թվարկի՛ր «Սուկիկի մահը» ստեղծագործության հերոսներին:

Ի՞նչ արեցին, երբ լսեցին մկան մահվան լուրը.

Միայն հոգը փարեց, տվեց գլխին:

Ճառը _____

Լորիկը _____

Քարկոզը _____

Պառավը _____

Ջրերը _____

Այս պատմության մասին փոքրիկ հայտարարություն գրի՛ր՝ լրագրում տպագրելու համար:

_____

_____

_____

_____

_____

Երգը Լեյլա Կարապետյանի «Երգարանից» է:
Այդ «Երգարանում» շատ հին ու նոր մանկական երգեր կան:

ԼՈՐԻԿ



Առավոտյան փչեց հով,
Արտը ծփաց, դարձավ ծով,
Արտի միջից թռավ լոր,
Թռավ, ընկավ սար ու ձոր:
Այ լորիկ, ջա՜ն, լորիկ,
Կլորիկ ու թմբլիկ:

Լորիկ, լորիկ, այս տարի
Արտս ցանել եմ գարի,
Ուր որ գնաս՝ շուտ արի,
Արտիս միջին ծվարի:
Այ լորիկ, ջա՜ն, լորիկ,
Կլորիկ ու թմբլիկ:

ԴԵՐԵՆԻԿ
ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՊՈՒՅՊՈՒՅ ՄԿՆԻԿԸ

Մի երկիր կա՝ Հնդստան,
Մի մուկիկ կար՝ ճատճատան,
Հնդստանի անտառում,
Կոկոս ծառի ծակուռում:

Ապրում էր նա իր համար
Բարիքներում անհամար,
Ու մի օր լավ, մի օր վատ՝
Ուներ ապրուստ քիչ թե շատ:

Օրը մի ճանճ, մի միջատ,
Մի ծեղ, արմատ, ցորնի հատ
Ուտում էր ու քեֆ անում,
Խաղում, ապրում իր բնում:

Իր անունը Պույպույ էր,
Ազգանունը Ճատունի:
Լացը՝ վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ էր,
Երգը՝ տարայ-նա՛յ-նի՛ նի՛:
Էսպես մուկիկն ապրում էր,
Վազվզելով վար ու վեր,
Ու մի օր էլ ծանր ու մեծ
Իրեն-իրեն միտք արեց.

«Տունս կոկոս ծառի տակ,
Բերան չունե՞մ, թե՞ ճաշակ.
Ճանճ կերել եմ, ծեղ կերել,
Տեսնեմ կոկոսի համն էլ»:

Այս ասելն էր, մեկ էլ, դո՜մփ,
Ծառից կոկոսն ինչպես բոմբ
Ընկավ նրա առաջին:
Կոկո՜ս, կաղին չէ չնչին:

Կաղնի տեսակ, սեխի չափ,
Միջուկն անո՜ւշ, յուղալի՜,
Բայց կեղևն է միայն հաստ,
Ահա ինչն է ցավալի...

Վրա ընկավ մուկիկը,
Բացեց սուր-սուր ճանկերը
Կեղևը հաստ է, ո՞նց անի
Ու սկսեց վույ-վույը:

«Ախր ի՞նչ է, ի՞նչ կլի,
Տեսնեմ դրա համն էլի՜:
Մի քիչ կոկոս, մի քիչ ջուր,
Գոնե մի կում, մի պուճուր»:

Դու մի ասի՝ ընկնելուց
Ծակ էր բացվել կոկոսում,
Էդ որ տեսավ, հիմի էլ
Ծակից մտնել էր ուզում:

Բայց տեսեք ինչ պատահեց.
Ծակն էր պստիկ, ինքը՝ մեծ:
Ծակից ներս չի մտնում,
Սովից էլ ուշքն է գնում:

Լաց է լինում մուկիկը...
Ո՞նց լաց չլնի մուկիկը...
Սիրտն ուրիշ բան չի ուզում,
Նայում է ու նվազում:

Էսպես լացեց, սուգ արեց,
Էնքան լացեց, սուգ արեց,
Հետո էլ սովից լդարեց:

Որ լդարեց, բարակեց,
Մեկ էլ, ըհը՛, ճանճի պես
Ծակից մտավ, գնաց ներս:

- Էս ի՞նչ էր, տո՛, ո՞նց եղավ,
Էս ծակից ո՞նց ներս մտավ,
- Ո՞նց, ա՛յ, նայի՛ր, էս՝ մուկը,
Էս՝ կոկոսն ու միջուկը:

- Դե, քեֆ արա, օխա՜յ-օխա՜յ,
Դե, պար արի, տարա՜յ, նանա՜,
Դե, միջուկը կե՛ր ու կրծի՛ր,
Կե՛ր միջուկը, հյութը խմի՛ր:

Հա՛մ ուտում է, հա՛մ էլ պարում,
Հա՛մ պարում է, հա՛մ էլ երգում.
«Ինքս Պուլպուլ, պարս՝ տուլտուլ,
Էլ ի՞նչ վայ-վայ, էլ ի՞նչ վուլ-վուլ»:

Էսպես թռչում, ծափ էր տալիս,
Պար էր գալիս, ռանգի, յայլի,
Գոռում էր՝ ջա՜ն, տարայ-նի-նի,
Ա՛յ թե քեֆը ինչպես կլնի:

Էս որ էսպես կերավ, մաքրեց,
Առաջ փոքր էր, հիմա տռզեց,
Տռզեց, դարձավ խոշոր մի մուկ,
Ընկավ կողքին, քնեց խորունկ:

Մեկ օր անցավ, եկավ նոր օր,
Է՜հ, մուկիկը վեր կացավ, որ
Փուչ կոկոսի ծակից դուրս գա,
Ախր դուրսը գործ կա, տուն կա:

«Լավ էր, կերանք բավականին,
Հիմա գնանք մենք մեր բանին»:
Հեշտ էր ասել... Ապա փորձիր,
Մի կոկոսի ծակից անցիր:

Մոտեցավ, որ ծակից դուրս գա,
Պահո՜... Տեսավ ճամփա չկա,



Ինքը խոշոր, ծակը պուճուր...
Այդ է՝ մնաց, բայց մնա՞ր...

Լաց է լինում մուկիկը:
Ո՞նց լաց չլնի մուկիկը:
Տոզել է կոկոսում,
Մնացել է նեղ փոսում:

Ախր ի՞նչ բան ունեիր,
Գայիր կոկոս ուտեիր,
Չոռ ուտեիր՝ լավ չէ՞ր, հը՞,
Ցավ ուտեիր, լավ չէ՞ր, հը՞...

«Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, - գահրոմա՞ր,
Դե լաց, մնա քեզ համար»:

Էսպես լացեց մուկիկը.
Էնքան լացեց մուկիկը,
Հետո էլ սովից լղարեց:

Որ լղարեց, բարակեց,
Մեկ էլ, ըհը՛, սուս ու փուս
Ծակից նորից ելավ դուրս:

Վա՛հ, էս ինչ էր, էս ո՞նց եղավ,
Բա էս ծակից ո՞նց դուրս եկավ,
Ո՞նց... ա՛յ, նայի՛ր, էս ես՝ մուկը,
Էն՝ կոկոսը, էն՝ միջուկը:

Տեսա՞ր լավ բան, կեցցե՛ս Պույպույ,
Տո՛, էլ ի՞նչ «վայ», էլ ի՞նչ «վույ-վույ»,
Տո՛, քեֆ արա, օխա՜յ, օխա՜յ,
Դե, պա՛ր արի, տարա՛յ-նի-նայ...

Հա՛մ թռչում է, հա՛մ պարում է,
Հա՛մ երգում է, հա՛մ կանչում է,
Ջա՜ն, քե՛ֆ արա, տարայ-նի-նի՜,
Ա՜յ թե քեֆը ինչպես կլնի:

կոկոս - արևադարձային բույս
ծակուռ - փչակ
բոմբ - ռումբ
ապրուստ - ապրելու միջոց

ծեղ - չոր խոտ
նկազել - քչանալ, պակասել, բարակել
լղարել - նիհարել
ռանգի, յայլի - պարի տեսակներ
տոզել - գիրանալ, փքվել

Գտի՛ր և դո՛ւրս գրիր համապատասխան հատվածները.

Նմուշ

Բարիքներում անքիվ, անհաշիվ... *Բարիքներում անհամար...*

Ինքն իրեն մտածեց _____

Բայց տեսեք ինչ եղավ _____

Հենց ասաց, մեկ էլ, դո՜ մի... _____

Հետո էլ սովից նիհարեց... _____

Պույպույի անունից բոլորին հրավիրի՛ր՝ նշելու կոկոսից դուրս գալը:

_____

_____

_____

Փակագծերում գրված բառերից ու արտահայտություններից ընտրի՛ր մեկը և գրի՛ր իր տեղում.

Ծակից ներս չի մտնում,
Սովից էլ _____:
(ուշաթափվում է, ուշքն է գնում)

Սիրտն ուրիշ բան չի ուզում,
Նայում է ու _____:
(քարակում, նիհարում, նվազում)

Ու մի օր էլ _____
Իրեն-իրեն միտք արեց:
(լուրջ-լուրջ, ծանր ու մեծ)

Ուտում էր ու _____
Խաղում, ապրում իր բնում:
(ուրախանում, քեֆ անում)

Պատմի՛ր Պույպույի մասին՝

ա) մինչև կոկոսի ընկնելը

_____

_____

բ) կոկոսում քեֆ անելիս

_____

_____

_____

գ) կոկոսից դուրս գալուց հետո:

_____

_____

_____

_____

Այս խորհուրդներից ո՞րը կտայիր Պույպույին կոկոսի մեջ մտնելուց առաջ:

Գիտունի հետ քա՛ր քաշիր, անգետի հետ փլավ մի՛ կեր:
Յոթ չափի՛ր, մեկ կտրի՛ր:
Մտնելուց առաջ մտածի՛ր, թե ինչպես ես դուրս գալու:
Առուն չքռած՝ հոպ մի ասա:

Ինչի՞ համար են ատամները

Ատամները բերանում մանրացնում են սնունդը: Սուր կտրիչները կտրատում են, սրածայր ժանիքները ավելի են մանրացնում սնունդը, սեղանատամները տրորում, ծամում են այն:

Երեք տարեկանում երեխան ունի քսան ատամ: Մեծ մարդը ունի երեսուներկու ատամ:

Զատիկ

Զատիկը հայերի սիրած ամենահին տոներից է: Այն նշում են մարտի վերջին կամ ապրիլին:

Զատիկի տոնին մարդիկ երկար են պատրաստվել՝ յոթ բաղարջ են թխել, ձու են հավաքել, տունուտեղն են մաքրել, հագուստն են նորացրել:

Սկզբում Զատիկը բնության զարթնելու, գարնան գալու տոն է եղել: Հետո այն կապել են Քրիստոսի հարության հետ: Տոնի նախորդ օրը և Զատիկին իրար շնորհավորել են Քրիստոսի հարության առթիվ:

Այդ օրը հավաքվել են եկեղեցում, մատաղ են արել, ձվակռիվներ և ուրիշ խաղեր են կազմակերպել, ներկած ձվեր են իրար նվիրել, կերել-խմել են, երգել, պարել, ուրախացել:

Զատիկի ձվերը խաշել են ու կարմիր ներկել: Տրնդեզից, Ցառզարդարից պահված ճյուղերով թոնիրն են վառել, ճրագ ու մոմ են վառել:

Շաբաթ երեկոյան հավաքվել են սեղանի շուրջ: Սեղանին ձու է եղել ու ձկնեղեն, յուղով պատրաստված կերակուրներ:

Քանի որ Զատիկի տոնին միշտ ձու է եղել, խաղերի ժամանակ ձվի մասին հանելուկներ են գուշակել.

Այսպես՝

Մի տուն ունեմ՝ դուռ չունի,
Դուրսն արծաթ է, մեջը՝ ոսկի:

Այսօր կլոր մարմար քար,
Վաղը կթռչի վերուվար:

Կարաս ունեմ մի պուճուր,
Մեջը՝ երկու գույնի ջուր:

Ինչ տուն է՝ քարով խփես, կքանդվի,
Էլ չի շինվի:

Զատիկի հետ կապված շատ առած-ասացվածքներ կան.



Ունևորի համար միշտ զատիկ է:
Կարմիր ձուն զատիկին կսազի:
Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:
Զատիկն առանց ձվի չի լինի:
Հավը կուտե հատիկ-հատիկ,
Ցով ձմեռեն կելնե Զատիկ:

Զատիկին երեխաները զատիկ բզեզ են բռնել, դրել են ձեռքներին ու ասել.

Զատիկ, Զատիկ, նավակատիկ.
Արի նստի մեր տան մոտիկ,
Ես քեզ կուտամ խաս գուլպա,
Արի, խեր բեր մեր տան վրա:

Փետրվարի վերջին, մարտի սկզբին ափսեների մեջ ցորեն ու գարի են ցանել, որ ծլի: Զատիկի օրը այդ ափսեները դրվել են սեղանին:

Հետո այդ ծիլերը գցել են ջուրը կամ արտում, որ բերքը առատ լինի:

Զատիկին վերաբերող հատուկ երգեր են երգել.

Դռան առաջ հերկեցին,
Զատկի ձվեր ներկեցին,
Դրկիցին (հարևանին) ողջույն տվեցին:
Լուսնակն անուշ, հովն անուշ
Հում կաթի պաղ սերն անուշ:

Զատիկի տոնի մասին ամեն ինչ կարող եք կարդալ Ռուդիկ Հարությանի «Զատիկ» գրքույկում:

ԳՆԴԻԿ-ԲՈՔՈՆԻԿ

Ռուսական ժողովրդական հեքիաթ

Լինում են, չեն լինում մի պառավ ու մի ծերուկ են լինում: Մի օր ծերուկը պառավին խնդրում է.

- Պառա՛վ ջան, մի գնդիկ-բոքոնիկ թխիր:

- Ինչո՞վ թխեմ, ալյուր չունենք:

- Է՛, պառավ ջան, տաշտակը քերիր, մեջը ավլիր, կարող է մի բան դուրս գա:

Պառավը վերցնում է սագի թևիկը, տաշտակը քերում-քերքրում, մեջը ավլում, հավաքում է մի բուռ ալյուր:

Թխում է պառավը մի գնդիկ-բոքոնիկ, դնում պատուհանի գոգին, որ սառի:

Գնդիկ-բոքոնիկը մնում է մնում ու հանկարծ լուսամուտից գլորվում նստարանին, նստարանից՝ հատակին, հատակի վրայով՝ դեպի դուռը, շեմքից ցատկում է նախասենյակ, նախասենյակից՝ գլորվում բակ, այնտեղից դուրս է թռչում ու գլորվում ճանապարհով:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը ճանապարհով, դեմն է դուրս գալիս մի նապաստակ:

- Գնդի՛կ-բոքոնիկ, գնդի՛կ-բոքոնիկ, ես քեզ կուտեմ:

- Մի՛ կեր ինձ, շղի՛կ նապաստակ, ես քեզ համար մի երգ կասեմ,- ու երգում է. «Գնդիկ-բոքոնիկն եմ ես, տաշտակից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած: Ես տատիկից փախել եմ, ես պապիկից փախել եմ, քեզնից փախչելն ի՞նչ է որ...»:

Ու գնում է իր ճամփան գնդիկ-բոքոնիկը, կորչում նապաստակի աչքից:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, գլորվում, մեկ էլ դեմն է դուրս գալիս գայլը:

- Գնդի՛կ-բոքոնիկ, գնդի՛կ-բոքոնիկ, ես քեզ պիտի ուտեմ:

- Մի՛ կեր ինձ, գո՛րշ գայլուկ, ես քեզ համար մի երգ կասեմ. «Գնդիկ-բոքոնիկն եմ ես, տաշտակից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած: Ես պապիկից փախել եմ, ես տատիկից փախել եմ, նապաստակից փախել եմ, քեզնից փախչելն ի՞նչ է որ...»:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, կորչում գորշ գայլի աչքից:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, գլորվում, հանկարծ դեմն է դուրս գալիս արջը:

- Գնդի՛կ-բոքոնիկ, գնդի՛կ-բոքոնիկ, ես քեզ պիտի ուտեմ:

- Ինձ մի՛ կեր, ծուռթաթ արջ, ես քեզ համար մի երգ կասեմ,- ու երգում է. «Գնդիկ-բոքոնիկն եմ ես, տաշտակից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած: Ես պապիկից փախել եմ, ես տատիկից փախել եմ, նապաստակից փախել եմ, ես գորշ գայլից փախել եմ, քեզնից փախչելն ի՞նչ է որ...»:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, կորչում արջի աչքից:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, գլորվում, ու հանկարծ դեմն է դուրս գալիս աղվեսը:

- Բարև, գնդիկ-բոքոնիկ, էս ի՞նչ լավիկն ես:

Իսկ գնդիկ-բոքոնիկը երգում է. «Գնդիկ-բոքոնիկն եմ ես, տաշտակից քերված, կողքերից ավված, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած: Ես պապիկից փախել եմ, ես տատիկից փախել եմ, նապաստակից փախել եմ, գորշ գայլուկից փախել եմ, ծուռքաթ արջից փախել եմ, քեզնից փախչելն ի՞նչ է որ...»:

- Էդ ինչ լա՜վ երգ է,- ասում է աղվեսը: - Ափսոս՝ ես պառավել եմ, լավ չեմ լսում: Նստի՛ր, խնդրում եմ, քթիս ու մեկ էլ երգիր, մի՞ քիչ բարձր:

Գնդիկ-բոքոնիկը թռչում է աղվեսի քթին ու երգում նույն երգը:

- Շնորհակալ եմ, գնդիկ-բոքոնիկ, շատ լավ երգ է: Ես մեկ էլ կուզեի լսել: Նստի՛ր, խնդրում եմ, լեզվիս ու երգիր վերջին անգամ,- ասում է աղվեսն ու հանում լեզուն:

Գնդիկ-բոքոնիկը հիմարի նման թռչում է աղվեսի լեզվին, իսկ աղվեսը՝ հափ ու կուլ է տալիս խեղճ գնդիկ-բոքոնիկին:

Նկարի՛ր գնդիկ-բոքոնիկին և նկարագրի՛ր նրան (թշիկները, աչքերը, բերանը, ականջները...):

Արջի անունից պատմի՛ր իր և բոքոնիկի հանդիպման մասին:

Աղվեսի անունից նամակ գրի՛ր տատիկին ու պապիկին:

Փորձի՛ր տատիկի եւ պապիկի անունից հայտարարություն գրել բոքոնիկի կորչելու մասին:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԿՈՒՎԸ ԳԼՈՒԽ ՉԵԿԱՎ

Երկու ծերունիներ ապրում էին միասին մի բակում:

Նրանց մեջ ոչ մի անգամ վեճ ու կռիվ չէր ծագել: Եվ ահա մի օր էլ ծերունիներից մեկն ասաց մյուսին.

- Այդ ինչպե՞ս է լինում, որ մարդիկ իրար հետ կռվում են:

Արի փորձի համար մի օր էլ մենք կռվենք:

Մյուսը պատասխանեց.

- Ես չգիտեմ, թե ինչից է ծագում կռիվը:

Առաջին ծերունին ասաց.

- Ահա այս կավե ամանը մեջտեղ եմ դնում. ես կասեմ՝ դա իմն է, դու էլ թե՝ չէ, քոնը չէ, իմն է: Սրանից էլ վեճ կծագի, վեճից էլ՝ կռիվ:

Այդպես էլ արին:

Նրանցից մեկն ասաց.

- Դա իմն է:

Մյուսը պատասխանեց.

- Իսկ ես գիտեմ, որ դա իմն է:

Առաջինը նորից ասաց.

- Չէ, քոնը չէ, իմն է:

Այդ ժամանակ երկրորդ ծերունին պատասխանեց.

- Իսկ եթե քոնն է, վերցրո՛ւ, քե՛զ լինի:

Այդպիսով, նրանց՝ իրար հետ կռվելը գլուխ չեկավ:

Ինչո՞ւ հարեւանների կռիվը գլուխ չեկավ:

Քո կարծիքով ինչի՞ց են սկսվում կռիվները:

Ընդգծի՛ր այն առած-ասացվածքները, որոնք համապատասխանում են «Կռիվը գլուխ չեկավ» պատմությանը:

Լավ հարեւանը վատ բարեկամից լավ է:
Կռվի մեջ փլավ չեն բաժանում:
Գայլի հետ ընկերություն արա, փայտը ձեռքիցդ մի՛ գցիր:
Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա:

ՁԱՆԻ ՈՌԴԱՐԻ

ՈՉ ՄԻ ԲԱՆԻՑ ՄԱՐԴՈՒԿԸ

Կար չկար ոչ մի բանից մարդուկ կար: Ոչ մի բանից մարդո՞ւկ: Այո, նրա քիթն էլ էր՝ ոչ մի բանից, բերանն էլ: Հագին բա՜ն չկար, կոշիկներն էլ ոչ մի բանից էին:

Մի օր մարդուկը քայլում է ճամփով, որ ոչ մի տեղ չէր տանում, և հանդիպում է ոչ մի բանից մկնիկի:

- Լսի՛ր,- ասում է մարդուկը,- դու կատուներից չե՞ս վախենում:

- Ո՜չ,- պատասխանում է մկնիկը: - Այս երկրում կատուներն էլ են ոչ մի բանից, նրանց բեղերն էլ, ճանկերն էլ: Իսկ ես պանիր եմ սիրում: Ես ուտում եմ միայն անցքերը: Ճիշտ է, նրանք հոտ չունեն, բայց քաղցր են:

- Իմ գլուխը պտտվեց,- ասաց ոչ մի բանից մարդուկը:

- Եվ եթե նույնիսկ գլուխդ պատին տաս, ոչ մի բան էլ չի լինի:

Մարդուկը որոշեց փորձել. մի պատ գտավ, որ գլուխը պատին տա: Բայց տես ինչ դուրս եկավ՝ պատն էլ էր ոչ մի բանից: Եվ քանի որ մարդուկը ուժեղ էր թափ առել, խփելիս անցավ պատի մյուս կողմը: Այնտեղ ոչի՜նչ չկար:

Մարդուկը այնքան հոգնեց այդքան ոչ մի բանից, որ քնեց:

Երազում տեսավ՝ իբր ինքը ոչ մի բանից մարդուկ է, քայլում է ոչ մի տեղ չտանող ճանապարհով, հանդիպում ոչ մի բանից մկնիկի:

Երազում մարդուկը նույնիսկ պանրի անցքեր կերավ: Ճիշտ էր ասում մկնիկը՝ այդ անցքերը իսկապես հոտ չունեին և քաղցր էին:

Ինչպիսի՞ն է ոչ մի բանից պանիրը ըստ այս պատմության:

Մարդուկի անունից շարունակի՛ր պատմել:

Գյուխս խփեցի իմ գտած պատին

Հեքիաթից դուրս գրիր ամենազարմանալի հատվածը:

Շարունակի՛ր պատմությունը.

Կար չկար ծիծաղից մի մարդ կար: Նրա քիթն էլ էր ծիծաղից, բերանն էլ: Նա ծիծաղից շորեր էր հագնում: Երբ քայլում էր,

Բարի հսկան՝ փիղը



Դու գիտե՞ս, որ միայն փղերը կնճիթ ունեն: Կարծում ես կնճիթը փղի քի՞թն է: Ոչ: Այն փղի վերևի շրթունքն է, որ միացել է քթին:

Փիղը կնճիթով շնչում է, խմում է, պաշտպանվում ու լողանում: Կնճիթի ծայրին բռնելու հարմարանք կա, որով կարող է գետնից անգամ շա՜տ փոքր առարկաներ վերցնել:

Ի՜նչ թեթև է քայլում փիղը: Նրա ոտքերի տակ փափուկ նյութից «բարձիկ» կա: Երբ փիղը ոտքը գետնին է դնում, այդ «բարձիկը» մեծանում է: Հենց վերցնում է ոտքը, բարձիկը նախկին չափն է ընդունում:

Երբ փղերի խումբը քայլում է, թվում է, թե նրանք լողում են օդում:

Փղերը սովորաբար խմբերով են ապրում: Խմբում 9-12 փիղ է լինում, որոնք օգնում են իրար, միասին են մեծացնում ձագերին և ունեն առաջնորդ:

Կռվարար, չենթարկվող փղերին խմբում չեն պահում, կամ էլ այդպիսի փիղն ինքն է հեռանում խմբից:

Մարդուց բացի փիղն ուրիշ թշնամի չունի: Ո՞վ կհամարձակվի այդպիսի հսկայի վրա հարձակվել:

Կնճիթը փղի ի՞նչն է.

_____

_____

Փիղը կնճիթով ի՞նչ է անում.

_____

_____

_____

Պատմի՛ր փղերի խմբի մասին.

_____

_____

_____

_____

_____

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԿԱՆԱՉ ԱԽՊԵՐ

Է՜յ, կանաչ ախպեր,
Է՜յ, ճանաչ ախպեր,
Արի՜, քեզ հետ բեր
Արևի շողեր.

Բե՛ր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վտակ,
Երկինք կապուտակ,

Խատուտիկ հավքեր,
Զրնգան երգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն.

Է՜յ, կանաչ ախպեր,
Է՜յ, ճանաչ ախպեր:

ճանաչ - ծանոթ
հավք - թռչուն
զրնգան - բարձր, զիլ ձայն ունեցող
մայուն - գառների (ոչխարների) հանած ձայնը

Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են ծիլը, ծաղիկը, խոտը, վտակը, երկինքը, հավքերը, երգերը:

անուշահոտ ծիլ

_____ *խոտ* _____ *երկինք*

_____ *ծաղիկ* _____ *հավքեր*

_____ *վտակ* _____ *երգեր*

Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր քեզ դուր եկած հատվածը:

_____

_____

_____

_____

Ի՞նքդ գարնանը հրավեր գրիր:

_____

_____

Հիմա ի՞նքդ հորինիր:

ԳԱՐՈՒՆ ԱՂՋԻԿԸ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱՌՏ

Ա՜խ, էապես էլ գիժ ամիս.
Մարդու հանգիստ չի տալիս:
Էսօր ուրախ օր կանի,
Վաղը անձրև ու քամի.

Առավոտը պայծառ օդ,
Կեսօրը մութ ու ամպոտ:
Մին հագնում է ապիտակ,

Մին կանաչին է տալիս.
Մի օր ցուրտ է, մի օր տաք,
Մին խնդում է, մին լալիս...
Ա՜խ, էապես էլ գիժ ամիս:

մին - մեկ

Դուրս գրիր և նկարիր քեզ դուր եկած հատվածը :

Ինչպե՞ս կբացատրես.

Մին խնդում է,
Մին լալիս:

Նկարիր մարտ ամսվա տարբեր «դեմքերը»:

	Էսօր ուրախ օր կանի		*Վաղը անձրև ու քամի*

Գրիր բանաստեղծության այն տողը, որը կընտրեիր որպես վերնագիր:

_____

Հորինիր հանելուկ մարտ ամսվա մասին:

_____

_____

_____

_____

_____

Երեկ ո՞ւր էիր, Արև...

- Արև, երեկ ամբողջ օրն ո՞ւր էիր, չկայիր:
- Ո՞նց թե չկայի: Ես միշտ կամ:
- Բայց երեկ ես քեզ չեմ տեսել:
- Այո, ես միշտ երկնքում եմ, բայց ամպերը մեկ-մեկ ինձ ծածկում են: Երբ երկինքը ամպամած է լինում, ցերեկը ես չեմ երևում: Գիշերն էլ ամպոտ երկնքում Լուսինն ու աստղերը չեն երևում:
- Եթե ինքնաթիռով թռչեմ, կտեսնե՞մ քեզ:
- Այո՛, կտեսնես, որովհետև ինքնաթիռը ամպերից վեր է բարձրանում:
- Իսկ եթե ինքնաթիռով քեզ մոտ թռչե՞մ...
- Ինքնաթիռով ինձ հասնել չես կարող: Ինձ ոչ ոք չի կարող հասնել:
- Ախտ՜ս...

Ինչո՞ւ ամպամած եղանակին
արևը չի երևում:

_____

_____

Ամպամած եղանակին ինչպե՞ս կարելի է
Արևը կամ Լուսինն ու աստղերը տեսնել:

_____

_____

_____

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՏԱՂ ՁԼԵՑԱՂԻԿԻ

(հատված)

Հողի մեջ քնած գարունն արթնացավ առավոտ կանուխ
Ու դստերն ասաց.
- Ելի՛ր, ձնծաղի՛կ...
Ծաղիկը ելավ, շուրջը ձյուն է դեռ ու դող է քամու,
Իսկ ինքը մենակ, ինքը մերկ ու բաց, ինքը բարալիկ...

Փակագծերում գրված բառերից ընտրի՛ր մեկը և գրի՛ր իր տեղում:

Հողի մեջ քնած գարունն արթնացավ

Առավոտ _____
(շուտ, կանուխ, վաղ)

Ու _____ *ասաց.*
(աղջկան, դստերն)

Իսկ ինքը մենակ, ինքը _____ *ու բաց,*
(մերկ, տկլոր, անզգեստ)

Ինքը _____
(բարալիկ, բարակ, նիհար)

Գարուն նկարի՛ր և պատմի՛ր նկարածդ:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ընդգծի՛ր ձնծաղիկին վերաբերող բառերն ու արտահայտությունները.

քնքուշ, ծիծաղելի, նազելի, բարալիկ, բարձր, գարնան ավետաբեր, գարնան զարդ, ձյան բագուհի, մերկ ու բաց, դողացող, քաջ, քաղցր, դառը, անուշահոտ:

Ի՛նքդ հորինիր.

ՁՆԾԱՂԻԿՆ ՈՒ ՔԱՄԻՆ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Կարո՞ղ է միաժամանակ և՛ ծմեռ լինել, և՛ գարուն

Այդպիսի բան միայն հեքիաթներո՞ւմ է լինում: Ո՛չ...

Բարձր սարերի գագաթներին համարյա միշտ ձյուն է նստած: Եթե ամռանը բարձրանաս ու հասնես այդ ձյանը, մանուշակներ, կանաչ խոտ կտեսնես: Այնտեղ վառ գույներով բույսեր են աճում: Նրանք Արևից կլանում են նրա ճառագայթները և դիմանում ցրտին:

Որտե՞ղ կարող է միաժամանակ և՛ գարուն լինել, և՛ ծմեռ:

_____

_____

Ինչո՞ւ բույսերը ձյան մեջ չեն սառչում:

_____

_____

_____

Ա. Ա. ՄԻԼՆ

ՎԻՆԻ-ԹՈՒԽ

(Ի-ին մաս)

Վաղուց, շա՜տ վաղուց, կարծեմ անցյալ ուրբաթ, Վինի-Թուխը մեն-մենակ ապրում էր անտառում: Նրա տան դռան վերևի տախտակին ոսկե տառերով գրված էր՝ «Միստր Սանդերս»:

Մի օր Վինի-Թուխը գնաց զբոսնելու: Անտառի բացատում մե՜ծ կաղնի կար: Կաղնու կատարին ինչ-որ մեկը բարձրաձայն բզզում էր՝ զզզը՜զ:

Վինի-Թուխը նստեց ծառի տակ, գլուխն առավ թաթերի մեջ ու սկսեց ծանր ու մեծ միտք անել: Սկզբում մտածեց. «Այս զզը՜զ-ն անպայման մի բան նշանակում է, ո՞վ է հենց այնպես, զուր տեղը բզզում: Ծառը բզզալ չի կարող: Ուրեմն այնտեղ մեկը կա: Իսկ ինչո՞ւ պիտի բզզա, եթե մեղու չէ: Այդպես է, որ կա»:

Դարձյալ մտածե՜ց-մտածե՜ց ու ինքն իրեն ասաց. «Իսկ ինչի՞ համար են մեղուները. մեղր սարքելու: Այդպես է, որ կա՛»:

Ապա կանգնեց ու ասաց.

- Իսկ մեղրը ինչի՞ համար է. որ ես ուտեմ: Իմ կարծիքով այդպես է, որ կա՛:

Ասաց ու սկսեց բարձրանալ ծառը: Բարձրանում էր ու քթի տակ երգում հենց նոր հորինած

երգը.

Թե արջուկները մեղու լինեին,
Նրանց մտքովն անգամ չէր անցնի
Տունը կառուցել ա՜յ այսքան բարձր,
Տունն այսքան բարձր չէին կառուցի:

Նա մի քիչ էլ բարձրացավ... էլի մի քիչ... մի՜ պստիկ էլ... Այստեղ հևաց ու նոր քառատող - հևհևիկ հորինեց.

Ահա այդ դեպքում, եթե իհարկե,
Մեղուները արջուկ լինեին,
Արջուկների էլ ինչին էր պետք,
Որ բարձրանային այս հսկա կաղնին:

Մեր մեջ ասած, Թուխը կարգին հոգնել էր, դրա համար էլ հևհևիկը այնքան էլ լավ չստացվեց: Համարյա բան չէր մնացել, մնում էր հասնել այս ճյուղին ու...

Թրա՜խկ:

- Մա՜,- կանչեց Թուխը: Խեղճը խփվում էր ճյուղերին, օդի մեջ գլուխկոնծի էր տալիս՝ գոռալով.

- Ա՜խ... մա՜... ախր ինչո՞ւ ես... Ախր ոչ մի վատ բան չէի ուզում անել:

Վերջապես ընկավ ներքևում աճող մասրենու թփերի մեջ:

- Այս բոլորի պատճառը մեղրն է. ախր ես մեղր շատ եմ սիրում,- փնթփնթաց Թուխը:

Նա մի կերպ դուրս պրծավ մասրենու թփերի միջից, քթից պոկեց փշերը ու նորից մտքերի մեջ ընկավ. տեղնուտեղը հիշեց Քրիստոֆեր Ռոբինին: Քրիստոֆեր Ռոբինը Թուխի բարեկամն ու խորհրդատուն էր: Նա խելոք ու բարի տղա էր:

Փորձիր համապատասխան տեղերում գրել՝ լուրջ մտածել, իզուր, անմիջապես, ցածրաձայն (իր համար) երգել, շատ հոգնել *բառերն ու արտահայտությունները.*

ծանր ու մեծ միտք անել _____

զուր տեղը _____

քթի տակ երգել _____

կարգին հոգնել _____

տեղնուտեղը _____

Դո՛ւրս գրիր բացատի ու կաղնու մասին պատմող հատվածը ու նկարի՛ր:

Ծառը տեսնելուց և բզզոցը լսելուց հետո ի՞նչ արեց Վինի-Թուխը. այդ նախադասությունը դո՛ւրս գրիր:

Մեղուներից մեկն ինչպե՞ս կպատմի այս պատմությունը՝ շարունակի՛ր.

Շա՜տ վաղուց, կարծեմ՝ անցյալ ուրբաթ, աշխատում էինք ու բզզում:

Վինի-Թուխի անունից դիմի՛ր մեղուներին:

Շարունակի՛ր հորինել.

ԱՐՋԸ ՄՏՔԵՐԻ ՄԵՋ

Արջ Ծուռքաթը զբոսնում էր քաղաքում: Երբ անցնում էր Մտքեր կոչվող փողոցով, տեսավ, որ ծիծաղելի մտքերը ինչ-որ բան են կառուցում:

Արջ

- Արջ, ա՛յ Արջ, դեռ քնա՞ծ ես:

- Քնած եմ, քնած: Կողերս էլ արդեն հոգնել են պառկելուց:

- Լսի՛ր, Արջ, արթնանալու ժամանակը չէ՞:

- Չէ՞:

- Այսպես որ գնա, դու գարնանն էլ քնած կմնաս:

- Մի՛ վախենա: Գարունն ինձ կարթնացնի:

- Ի՞նչ պիտի անի՝ դո՞ւռդ կթակի, կերգի՞, թե՞ կրունկներդ խուտուտ կտա: Արջ, ախր դու շատ դժվարությամբ ես արթնանում:

- Օհո՛-հո՛: Գարունն ինձ այնպես կթրջի, որ պառկած տեղից վեր կթռչեմ: Հիմա, քանի դեռ չոր եմ, թող քնեմ:

Արջն ի՞նչ է անում ձմռանը:

Գարունն ինչպե՞ս է արթնացնում կենդանիներին:

ՎԻՆԻ-ԹՈՒԽ

(2-րդ մաս)

Եվ այսպես, Վինի-Թուխը գնաց իր բարեկամ Քրիստոֆեր Ռոբինի մոտ, որն ապրում էր անտառում, կանաչ դուռ ունեցող տնակում:

- Բարի լույս, Քրիստոֆե՛ր Ռոբին:

- Բարի լույս, Թո՛ւխ,- ուրախացավ տղան:

- Լսի՛ր, դու պատահաբար փուչիկ չունե՞ս:

- Փուչի՞կ:

- *Այո, գալիս էի ու մտածում. «Տեսնես* Քրիստոֆեր Ռոբինը փուչիկ ունի՞»: Պարզապես հետաքրքիր է:

- Փուչիկն ի՞նչ ես անում:

Վինի-Թուխը նայեց շուրջը, համոզվեց, որ իրենց ոչ ոք չի լսում, թաթը մոտեցրեց բերանին ու շշնջաց.

- Մե՛ղր:

- Ի՞ի՞նչ:

- Մեղր,- կրկնեց Վինի-Թուխը:

- Ո՞վ է փուչիկով մեղր բերելու գնում:

- Ե՛ս,- ասաց Վինի-Թուխը:

Հենց երեկ երեկոյան Քրիստոֆեր Ռոբինը հյուր էր գնացել իր բարեկամ Դնչիկի տուն, որտեղ նրան երկու փուչիկ էին նվիրել՝ կապույտ ու կանաչ:

- Սրանցից ո՞րն է քեզ դուր գալիս,- հարցրեց Քրիստոֆեր Ռոբինը:

Թուխը գլուխն առավ թաթերի մեջ.

- Եթե ուզում ես մեղր ձեռք գցել, այնպես պիտի անես, որ մեղուները քեզ չնկատեն: Կանաչ փուչիկը տեսնելիս նրանք կմտածեն, որ դա տերև է և քեզ չեն նկատի: Իսկ եթե փուչիկը կապույտ լինի, նրանք երևի կմտածեն, որ այն պարզապես ամպի կտոր է, և դարձյալ քեզ չեն նկատի: Տես-



նես՝ որի՞ն ավելի շուտ կհավատան:

- Դու կարծում ես, որ փուչիկի տակ նրանք քեզ չեն նկատի՞:

- Կարող է նկատեն, կարող է՝ ոչ,- ասաց Վինի-Թուխը: - Ի՞նչ իմանաս՝ ի՞նչ կանցնի մեղուների մտքով:

Թուխը մի քիչ էլ մտածեց և ավելացրեց.

- Ես կձևացնեմ, թե իբր փոքրիկ, թուխ ամպիկ եմ: Այդ դեպքում նրանք երևի գլխի չընկնեն:

- Ուրեմն ավելի լավ է կապույտ փուչիկը վերցնես,- ասաց Քրիստոֆեր Ռոբինը:

Բարեկամներն այդպես էլ արեցին: Թուխը վերցրեց կապույտ փուչիկը, Քրիստոֆեր Ռոբինը՝ իր հրացանը, և երկուսով ճանապարհ ընկան:

Վինի-Թուխը նախ և առաջ մոտեցավ մի ծանոթ ջրափոսի, մի լա՜վ թավալվեց ցեխաջրում, որ կարգին սև անա, նմանվի իսկական ամպիկի: Հետո սկսեցին փուչիկը օդով լցնել: Հենց փուչիկը շա՜տ ուռեց, Ռոբինը թելը բաց թողեց: Վինի-Թուխը փուչիկի հետ երկինք սլացավ ու կախվեց օդում:

- Ուռա՜,- բացականչեց Քրիստոֆեր Ռոբինը:

- Հը, ո՞նց է,- երկնքից կանչեց Վինի-Թուխը, - հիմա ո՞ւմ եմ նման:

- Դու նման ես արջի, որ թռչում է փուչիկից կախված:

- Փոքրիկ սև ամպիկի նման չե՞մ,- անհանգստացավ Վինի-Թուխը:

- Այնքան էլ չէ:

- Դե լավ, ոչինչ, այստեղից երևի նման եմ: Եվ հետո, ի՞նչ իմանաս, թե մեղուների մտքով ինչ կանցնի:

Դժբախտաբար քամի չկար, և Թուխը բոլորովին անշարժ կախված էր օդում: Նա կարող էր մեղրի հոտն առնել, կարող էր տեսնել մեղրը, բայց մեղրին հասնել ոչ մի կերպ չէր կարող:

Նկարագրի՛ր Վինի-Թուխին:

Պատմի՛ր Վինի-Թուխի մասին:

Պատմի՛ր Քրիստոֆեր Ռոբինի մասին:

Վինի-Թուխն ու Քրիստոֆեր Ռոբինը ինչպիսի՞ ընկերներ են: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

Վինի-Թուխը ի՞նչ կպատմի մեղրի մասին:

Ի՞նչ է սիրում արջը

Իմացար չէ՞, որ Վինի-Թուխը մեղր շատ է սիրում: Բոլոր արջերն էլ մեղր սիրում են: Երբ մեծ փեթակ են գտնում, թաթը մեջն են մտցնում: Արջը մրգեր և ուրիշ պտուղներ էլ է ուտում: Ուտում է նաև բզեզներ, ձվեր, խխունջներ: Պատահում է, որ արջը հոտից ոչխար կամ գառ է փախցնում:

Թվի՛ր, թե ինչ է ուտում արջը:

ՎԻՆԻ-ԹՈՒԽ

(3-րդ մաս)

Մի քիչ համբերելուց հետո Թուխը նորից խոսեց:

- Քրիստոֆեր Ռոբին,- շշուկով կանչեց նա:

- Ի՞նչ...

- Ինձ թվում է, մեղուներն ինչ-որ բան են կասկածում:

- Ի՞նչ:

- Չգիտեմ: Բայց ինձ թվում է, որ նրանք իրենց կասկածելի են պահում:

- Գուցե նրանք մտածում են, թե դու ուզում ես գողանա՞լ իրենց մեղրը:

- Գուցե: Ի՞նչ իմանաս՝ ինչ կանցնի մեղուների մտքով:

Նորից լռություն տիրեց, և քիչ հետո նորից լսվեց Թուխի ձայնը՝ Քրիստոֆեր Ռոբին:

- Ի՞նչ:

- Դու տանը հովանոց չունե՞ս:

- Կարծեմ ունեմ:

- Որ այդպես է, շատ եմ խնդրում, գնա տուն, բեր հովանոցդ և այստեղ գլխիդ պահած հետ ու առաջ քայլիր: Շարունակ նայիր ինձ ու ասա. «Վա՛յ, վա՛յ, վա՛յ, կարծես անձրև է գալու»: Կարծում եմ այդ ժամանակ մեղուները մեզ կհավատան:

Քրիստոֆեր Ռոբինը մտքում ծիծաղեց ու ասաց. «Ախ, դու հիմա՛ր արջուկ»,- բայց բարձրաձայն նա այդ բանը չասաց, որովհետև շատ էր սիրում Թուխին:

Նա գնաց տուն, բերեց հովանոցը:

- Վերջապե՞ս,- բացականչեց Թուխը, երբ Քրիստոֆեր Ռոբինը վերադարձավ: - Արդեն սկսել էի անհանգստանալ: Ես նկատեցի, որ մեղուներն արդեն իրենց կասկածելի են պահում:

- Հովանոցը բացե՞մ, թե պետք չէ:

- Բա՛ց արա, անպայման բա՛ց արա: Բայց սպասի՛ր մի րոպե, պետք է հաստատ գործ բռնել: Ամենից կարևորը մեղուների թագուհուն խաբելն է: Դու նրան տեսնո՞ւմ ես:

- Չէ:

- Դե լավ, ոչինչ, նա երևի քեզ տեսնում է: Իսկ հիմա բա՛ց արա հովանոցը և գլխիդ պահած՝ հետ ու առաջ քայլիր: Շարունակ ինձ նայի՛ր ու ասա՝ «Վա՛յ, վա՛յ, վա՛յ, կարծես թե անձրև է գալու»,- իսկ ես կերգեմ Ամպիկի երգը, որը, երևի, երգում են բոլոր ամպիկները երկնքում... Դե՛, սկսի՛ր:

Քրիստոֆեր Ռոբինը սկսեց ծառի տակ հետ ու առաջ քայլել և ասել.

- Վա՛յ, վա՛յ, վա՛յ, կարծես թե անձրև է գալու:

Իսկ Վինի-Թուխը երգեց այս երգը.

- Ես Ամպիկ եմ, Ամպիկ, Ամպիկ,
Ոչ թե փոքրիկ թուխ արջուկ,
Ա՜խ, ինչ լավ է լինել Ամպիկ
Ու սավառնել երկնքում:
Ա՜խ, երկնքում կապո՜ւյտ-կապո ւյտ
Ե՛վ հարմար է, և՛ խաղաղ,
Դրա համար Ամպիկների
Երգը թեթև է, ուրախ:

Բայց մեղուները, որքան էլ տարօրինակ է, Ամպիկին հավատալու փոխարեն, ավելի ու ավելի կասկածելի էին բզզում: Մի քանիսը նույնիսկ դուրս թռան բնից ու սկսեցին պտտվել Ամպիկի շուրջը: Իսկ ամենակասկածոտներից մեկը նույնիսկ մի քանի վայրկյան Ամպիկի քթին նստեց:

- Հե՜յ, Ռոբին,- գոռաց Ամպիկը:

- Ի՞նչ:

- Ես մտածեցի, մտածեցի ու գլխի ընկա: Սրանք ճիշտ մեղուներ չեն:

- Ի՞նչ ես ասում:

- Այո՛: Այնպես որ, ավելի լավ է ցած իջնեմ:

- Իջի՛ր,- ասաց Քրիստոֆեր Ռոբինը: - Բայց ինչպե՞ս:

Այդ մասին Վինի-Թուխը չէր մտածել: Նա մտածեց, որ եթե պարանը բաց թողնի, կընկնի: Դա նրան դուր չեկավ: Այդ ժամանակ էլի մտածեց և ասաց.

- Քրիստոֆեր Ռոբին, դու պետք է հրացանով խփես փուչիկին:

- Բայց եթե ես խփեմ, փուչիկը կծակվի:

- Իսկ եթե չխփես, ես կծակծկվեմ,- ասաց Թուխը:

Քրիստոֆեր Ռոբինը անմիջապես հասկացավ, թե ինչ պետք է անել: Նա խնամքով նշան բռնեց և կրակեց:

- Վա՛յ, վա՛յ, վա՛յ,- լաց եղավ Թուխը:

- Մի՞թե վրիպեցի,- հարցրեց Քրիստոֆեր Ռոբինը:

- Չի կարելի ասել, թե վրիպեցիր,- ասաց Թուխը,- բայց փուչիկին չդիպար:

- Ների՛ր, խնդրում եմ,- ասաց Քրիստոֆեր Ռոբինը և նորից կրակեց: Այս անգամ նա չվրիպեց: Օդն սկսեց կամաց-կամաց դուրս գալ փուչիկից, և Վինի-Թուխը բարեհաջող վայրէջք կատարեց:

Միայն թե այդքան ժամանակ թելից կախված լինելու պատճառով նրա թաթերը ամբողջովին փայտացել էին:

Մի ամբողջ շաբաթ Թուխը չէր կարողանում առջևի թաթերը շարժել, և դրանք այդպես էլ մնացել էին վեր տնկված: Եվ եթե նրա քթին ճանճ էր նստում, ստիպված էր լինում այդ աներեսին փչելով քշել՝ «թո՛ւխխ, թո՛ւխխ»:

Եվ գուցե, թեև ես դրանում համոզված չեմ, գուցե հենց այդ դեպքից հետո էլ Քրիստոֆեր Ռոբինը նրան Թուխ անվանեց:

Այս պատմությունը մեղուների անունից պատմի՛ր:

Քեզ դուր եկա՞վ այս պատմությունը: Կուզե՞ս իմանալ Վինի-Թուխի և նրա ընկերների մյուս արկածների մասին: Ուրեմն կարդա Ա.Ա.Միլնի «Վինի-Թուխը եւ բոլոր բոլորը» գիրքը:

Ըստ Ա. ԼԻՆԴԳՐԵՆԻ

ՄԱՆՉՈՒԿՆ ՈՒ ԿԱՌԼՍՈՆԸ

(1-ին մաս)



Ստոկհոլմ քաղաքը սովորական քաղաք է: Այդ քաղաքի շատ սովորական մի շենքում ապրում է սովորական մի ընտանիք:

Այդ ընտանիքում բոլորը սովորական են՝ հայրիկն էլ է սովորական, մայրիկն էլ: Բոսան, Բետան և Մանչուկն էլ սովորական երեխաներ են:

Ամբողջ շենքում ընդամենը մի անսովոր արարած կա՝ Կառլսոնը, որն ապրում է կտուրի վրա:

Գուցե ուրիշ քաղաքներում կտուրի վրա ապրելը սովորական բան է, բայց այստեղ ոչ ոք կտուրի վրա չի ապրում:

Կառլսոնը փոքրիկ, հաստլիկ, ինքնավստահ մարդուկ է: Նա կարողանում է թռչել: Հենց փորի վրայի կոճակը սեղմի, մեջքին գտնվող փոքրիկ շարժիչը կաշխատի, մի քիչ հետո կպտտվի պտուտակը, և Կառլսոնը կթռչի:

Նա շատ լավ է զգում կտուրի վրա, ամեն երեկո նստում է ու նայում աստղերին, կտուրից աստղերն ավելի լավ են երևում:

Մարդիկ նույնիսկ չգիտեն, որ կտուրի վրա տնակ կա, չեն էլ կարող տեսնել, որովհետև այն թաքնված է ծխնելույզի ետևում: Ընդհանրապես, մեծերը ուշադրություն կդարձնե՞ն այդքան փոքր տան վրա:

Մանչուկին տանը բոլորը սիրում են ու երես տալիս: Բայց այդ օրը, երբ նա ու Կառլսոնը ծանոթացան, այնքան էլ հաջող օր չէր, և Մանչուկ լինելը բոլորովին էլ հրաշալի չէր: Բոլորը նեղացրել էին իրեն, իսկ հայրիկը բարկացել էր դպրոցից ուշ գալու համար:

- Թափառում ես փողոցներում,- ասել էր նա:

Բայց, ախր, հայրիկը չգիտեր, որ ճանապարհին մի փոքրիկ, սիրունիկ շնիկ էր հանդիպել, հոտոտել էր իրեն, շարժել պոչիկը, կարծես ուզում էր ի՛ր շնիկը դառնալ: Մանչուկը նրան կբերեր, բայց ո՞վ կթողներ տանը շուն պահել: Բացի դրանից, այդ ժամանակ մի մորաքույր էր հայտնվել և կանչել շանը.

- Ռիկի՛, Ռիկի՛:

Փոքրիկը հասկացել էր, որ շունը երբեք իրենը չի լինի:

- Ուրեմն ամբողջ կյանքում առանց շան եմ ապրելո՞ւ,- տխուր ասաց Մանչուկը: - Ա՜յ, մայրի՛կ, դու հայրիկ ունես, Բեսան և Բետան միշտ միասին են, իսկ ես... ես մենակ եմ, ոչ ոք չունեմ:

- Սիրելի՛ Մանչուկ, չէ՞ որ բոլորս քոնն ենք,- ասաց մայրիկը:

- Չգիտեմ...,- հոգոց հանեց Մանչուկը, ու նրան հանկարծ թվաց, թե ինքը մեն-մենակ է աշխարհում ու ոչինչ չունի:

Ասենք՝ մի սենյակ ունի և գնաց այնտեղ:

Պատմի՛ր Մանչուկի ընտանիքի մասին:

Պատմի՛ր Կառլսոնի մասին:

Պատմի՛ր Մանչուկի մասին:

Պատմիր Մանչուկի և շան հանդիպման մասին:

Ի՞նչ կենդանի կուզեիր ունենալ. ինչո՞ւ:

Ինքդ հորինիր.

ՇՆԻԿՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

ՄԱՆՉՈՒԿՆ ՈՒ ԿԱՌԼՍՈՆԸ

(2-րդ մաս)



Գարնանային պարզ երեկո էր: Երկնքում աստղերը նոր էին սկսել երևալ: Մանչուկը նայում էր բաց պատուհանից ու մտածում այն շնիկի մասին, որին ցերեկն էր հանդիպել: Փոքրիկը հոգոց հանեց: Հանկարծ ինչ-որ թույլ բզզոց լսվեց: Ձայնը քիչ-քիչ ուժեղացավ, ու ա՜յ քեզ բան, պատուհանի մոտ՝ օդում մի հաստլիկ մարդուկ երևաց: Դա հենց Կառլսոնն էր, որն ապրում էր կտուրի վրա. Մանչուկը նրան դեռ չէր ճանաչում: Կառլսոնը երկա՜ր նայեց Մանչուկին ու թռավ: Բարձրացավ վեր, պտտվեց ծխնելույզի շուրջը, վերադարձավ և փոքրիկ ինքնաթիռի նման մի երկուերեք պտույտ գործեց:

Փոքրիկը զարմացած սպասում էր, թե ինչ է լինելու. հուզմունքից շունչը կտրվում էր, չէ՞ որ պատուհանի մոտով ամեն օր հաստլիկ մարդուկներ չեն թռչում:

Մարդուկը մոտեցավ պատուհանին.

- Ողջո՜ւյն: Կարելի՞ է այստեղ մի վայրկյան վայրէջք կատարել:

- Իհարկե, խնդրեմ,- շտապ պատասխանեց Մանչուկը,- ի՞նչ է, դժվա՞ր է թռչել:

- Թռչե՞լը... բոլորովին,- շատ լուրջ ասաց Կառլսոնը,- չէ՞ որ ես աշխարհի ամենալավ թռչողն եմ: Անունդ ի՞նչ է:

- Մանչուկ:

- Իսկ իմը Կառլսոն է: Ուղղակի Կառլսոն ու՝ վե՛րջ: Ողջո՜ւյն, Մանչո՛ւկ:

- Ողջո՜ւյն, Կառլսո՛ն:

- Քանի՞ տարեկան ես:

- Յոթ:

- Հրաշալի է: Շարունակենք զրույցը,- ասաց Կառլսոնը: Մի վայրկյան հետո նա հայտնվեց սենյակում:

- Իսկ դո՞ւ քանի տարեկան ես,- հարցրեց Մանչուկը. չէ՞ որ Կառլսոնը իրեն երեխայի նման էր պահում, և չէիր ասի, թե մեծահասակ է:

- Քանի տարեկա՞ն եմ. ես ուժերի ծաղկուն շրջանում գտնվող տղամարդ եմ:

Փոքրիկը լավ չէր հասկանում՝ ինչ է նշանակում ուժերի ծաղկուն շրջանում գտնվող տղամարդ: Գուցե ի՞նքն էլ է գտնվում ուժերի ծաղկման շրջանում: Այդ պատճառով էլ զգո՛ւյշ հարցրեց.

- Իսկ ո՞ր տարիքում են ուժերը ծաղկում:

- Ցանկացած,- ինքն իրենից գոհ պատասխանեց Կառլսոնը: Ցանկացած, եթե խոսքն ի՛մ մասին է: Ես գեղեցիկ, խելացի տղամարդ եմ:

Պատմի՛ր՝ ինչպես հայտնվեց Կառլսոնը:

Ինչպիսի՞ն է Կառլսոնը: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

Ինչպիսի՞ տղամարդ է Կառլսոնն իր կարծիքով:

Շարունակի՛ր հորինել.

Վինի-Թուխը, փուչիկից բռնած, կախվել է օդում: Որտեղից որտեղ հայտնվում է Կառլսոնը:

Ի՞նչ դժվար է թռչելը



Մարդը միշտ երազել է թռչել: Քանի որ թևեր չի ունեցել, փորձել է թռչել սարքերի միջոցով:

Թռչող մեքենաների առաջին գծագրերը կատարել է իտալացի մեծ նկարիչ, գիտնական Լեոնարդո դա Վինչին մոտ 500 տարի առաջ: Բայց թռչող մեքենա ստեղծելը այնքան էլ հեշտ գործ չէր:

110 տարի առաջ մի ռուս զինվորական ստեղծեց առաջին թռչող սարքը: Այն բավականին նման էր ժամանակակից ինքնաթիռին, բայց շատ թերություններ ուներ: Առաջին ինքնաթիռը գետնից բարձրացավ, թեքվեց կողքի և կոտրեց թևը:

Դրանից հետո տարբեր երկրներում մարդիկ շարունակեցին թևավոր մեքենաներ ստեղծելու փորձերը:

90 տարի առաջ ամերիկացիների ստեղծած ինքնաթիռը օդ բարձրացավ, անցավ 32մ: Առաջին թռիչքը տևեց մի քանի վայրկյան: Դա իսկական թռիչք էր՝ վերելքով ու վայրէջքով: Հետագայում ինքնաթիռներն անընդհատ կատարելագործվեցին:

Ի՞նչ կարող ես պատմել ժամանակակից ինքնաթիռների մասին:

ՄԱՆՉՈՒԿՆ ՈՒ ԿԱՌԼՍՈՆԸ

(3-րդ մաս)



Կառլսոնը մոտեցավ Մանչուկի պահարանին, վերցրեց խաղալիք մեքենան:

- Արի՛ սա լարենք:

- Առանց հայրիկի չի կարելի,- ասաց Մանչուկը: - Մեքենան կարելի է աշխատեցնել միայն հայրիկի կամ Բոսեի հետ:

- Հայրիկի, Բոսեի կամ Կտուրի վրա ապրող Կառլսոնի հետ: Խաղալիք մեքենաների ամենալավ մասնագետը աշխարհում Կառլսոնն է: Հայրիկիդ էլ այդպես կասես:

Նա վերցրեց մեքենայի շիշը, սպիրտը նրա միջից դատարկեց մեքենայի մեջ և վառեց պատրույգը: Չնայած Կառլսոնը խաղալիք շոգեմեքենայի լավագույն մասնագետն էր, բայց սպիրտը լցնելիս այնպես թափեց, որ դարակի վրա սպիրտի լճակ առաջացավ: Լճակը տեղնուտեղը վառվեց, կրակի լեզվակներն սկսեցին պարել: Մանչուկը վախեցած ճչաց ու հետ փախավ:

- Հանգիստ, միայն հանգիստ,- ասաց Կառլսոնը՝ բարձրացնելով թմբլիկ թաթը: Բայց Մանչուկը չէր կարող հանգիստ կանգնել ու նայել: Նա վերցրեց լաթի կտորը, խփելով՝ հանգցրեց կրակը: Դարակի վրա տեղ-տեղ անշնորհք բծեր հայտնվեցին:

- Տե՛ս՝ ինչպես փչացավ դարակը,- մտահոգ ասաց Մանչուկը: - Հիմա մայրիկն ի՞նչ կասի:

- Հասարակ բան է: Մի քանի պստլիկ բծեր են, էլի՛: Մայրիկիդ այդպես էլ ասա: Մի քանի վայրկյան հետո մեքենան աշխատեց՝ փո՛ւֆ-փո՛ւֆ-փո՛ւֆ: Կառլսոնի աչքերը փայլեցին, նա շատ հպարտ էր, կարծես ինքն էր հայտնագոր-

ծել մեքենան:

- Փուֆ-փուֆ-փուֆ,- ծխում էր մեքենան:

Մանչուկը մոռացել էր դարակի բծերը. նա երջանիկ էր, որ ծանոթացել է այս մեքենայի լավագույն մասնագետի հետ:

- Դե, Մանչուկ,- ասաց Կառլսոնը,- ա՛յ, սա գործ է, ես աշխարհի լավագույն մաս...

Խոսքը մնաց Կառլսոնի բերանում, որովհետև հենց այդ պահին պայթյուն լսվեց. մեքենան այլևս չկար, նրա կտորները թռան սենյակով մեկ:

- Պայթե՞ց,- հիացած կանչեց Կառլսոնը, կարծես այդ մեքենայով նա աշխարհի ամենահետաքրքիր ֆոկուսն էր արել:

- Ազնիվ խոսք, մեքենան պայթեց: Ի՞նչ պայթյուն էր: Ի՞նչ լավ էր:

Իսկ Մանչուկը կանգնել էր շփոթված, արցունքն աչքերում:

- Իմ մեքենան,- սնգրտաց նա,- իմ մեքենան կտոր-կտոր եղավ:

- Հասարակ բան է,- Կառլսոնը անհոգ թափ տվեց հաստլիկ թաթը,- ես քեզ ավելի լավը կտամ:

- Դո՞ւ,- զարմացավ Մանչուկը:

- Այո՛, վերևում ես հազար հատ այսպիսի մեքենա ունեմ:

- Որտե՞ղ՝ վերևում:

- Վերևում, կտուրին գտնվող իմ տնակում:

- Դու տնակ ունե՞ս և հազար հատ մեքենա՞:

- Դե, մի երկու հարյուր հատ հաստատ կլինի:

- Ա՜յ քեզ հրաշք՝ մեքենաներով լցված տուն,- հիացավ Մանչուկը: - Ինչպե՞ս կուզեի այնտեղ գնալ:

- Դե, ես չեմ հաշվել քանի մեքենա է մնացել, բայց մի քանի հատ կլինի:

- Եվ դու մեկն ինձ կտա՞ս:

- Իհարկե՞:

- Հենց հիմա՞:

- Դեռ ո՞չ: Շուտով դու կստանաս քո մեքենան: Մանչուկը սկսեց հավաքել պայթած մեքենայի մասերը:

- Պատկերացնում եմ՝ ինչպես կբարկանա հայրիկը:

- Դա հասարակ բան է: Մի՞թե դրա համար բարկանում են: Այդպես էլ ասա հայրիկիդ: Ես կասեի, բայց շտապում եմ, վերևում գործեր կան, պիտի տուն գնամ:

- Շատ լավ է, որ մենք հանդիպեցինք: Ափսոս մեքենան... Դու էլի կգա՞ս...

- Հանգի՛ստ, միայն հանգի՛ստ,- ասաց Կառլսոնը և սեղմեց փորի վրայի՞ կոճակը: Շարժիչը սկսեց դոռալ: Քիչ հետո մեջքի պտուտակը պտտվեց: - Շարժիչս խռխռում է: Արհեստանոց պիտի գնամ, որ յուղեն: Դա ինքս կանեի, բայց ժամանակ չկա:

Կառլսոնը պատուհանից դուրս թռավ: Նրա փոքրիկ, հաստլիկ մարմինը պարզ երևում էր աստղերով ծածկված երկնքի տակ:

- Հաջողությո՞ւն, Մանչո՞ւկ,- կանչեց Կառլսոնը, թափ տվեց թմբլիկ թաթիկը և անհետացավ:

Փորձի՛ր պատմել այս պատմության ամենատխուր հատվածը:

Քեզ դուր եկա՞վ Կառլսոնը. ինչո՞ւ:

Քո կարծիքով ինչե՞ր կան Կառլսոնի տանը:



Ավտոմոբիլ

Թվում է, թե անիվից պարզ ոչինչ չկա: Բայց անիվը մարդու ամենամեծ հայտնագործություններից է: Մարդը անիվով սայլ ստեղծեց, այդ սայլին ձի կամ ուրիշ կենդանի լծեց: Բայց մարդիկ երազում էին այնպիսի սայլ ունենալ, որ ինքն իրեն շարժվեր: Մոտ 230 տարի առաջ մի ֆրանսիացի ձիերի փոխարեն սայլին մեքենա լծեց: Այդ մեքենան գոլորշիով էր աշխատում: Հենց մեքենայի կաթսայի գոլորշին վերջանում էր, սայլը կանգնում էր: Մարդն իր ստեղծածը ավտոմոբիլ անվանեց, որ նշանակում է ինքն իրեն շարժվող:

Մանչուկի և Կառլսոնի մյուս արկածների մասին կարող ես կարդալ Աստրիդ Լինդգրենի «Մանչուկն ու Կառլսոնը» գրքում

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐԱԳԻԼ

(ժողովրդական)

Արագի՛լ, բարով եկար,
Հա՜յ, արագի՛լ, բարով եկար.
Դու մեզ գարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր:

Արագի՛լ, երբ գնացիր,
Դու մեզանից երբ գնացիր,
Հա՜ փչեցին բուք ու բորան,
Ծաղիկները ամեն տարան:

Արագի՛լ, բարով եկար,
Հա՜յ, արագի՛լ, բարով եկար.
Բունդ շինիր էն հին ծառին,
Մեզ մոտ մնա ամբողջ տարին:

Արագիլի գալն ինչո՞ւ է բոլորին ուրախացնում, բանաստեղծության համապատասխան տողերը գրի՛ր:

_____

_____

_____

_____

Դու՛ս գրիր քեզ դուր եկած քառատողը:

_____

_____

_____

_____

Հանելուկ հորինի՛ր արագիլի և գարնան մասին:

_____

_____

_____

_____

Ինչի՞ են նման՝

Գարնան ծաղկած ծառը նման է. _____

Գարնան առուն _____

Ձյան մեջ աճած ձնծաղիկը _____

Հեռագրի՛ր արագիլին, որ գա, գարուն բերի:

_____

_____

_____

Ի՛նքդ հորինիր.

ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ԳԱՐՈՒՆԸ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Ականջիդ օղ արա.

Օձի փուշը արագիլը կմարսի:

Մարտի ինֆին՝ լագլագը (արագիլը) բնին:

Արագիլ



Աշխարհում արագիլի 17 տեսակ կա: Հայաստանում տարածված է սպիտակ արագիլը: Երբեմն հանդիպում է նաև անտառներում, ճահճուտներում ապրող արագիլը:

Սպիտակ արագիլը մարդուց չի վախենում և բույնը հյուսում է գյուղերին մոտիկ բարձր ծառերի կատարներին, սյուներին, գյուղական տների կտուրներին: «Հյուսողը» մայր արագիլն է, իսկ «շինանյութը» կրում են երկուսը՝ հայրը և մայրը:

Ապրում են զույգերով: Ապրիլին արագիլը 3-7 ձու է դնում, 30-32 օր թուխս է նստում: Աշնանը արագիլները տաք երկրներ են չվում, գարնանը վերադառնում իրենց նախկին բները:

Սնվում են ձկներով, սողուններով, մկնանման կրծողներով, բուսական կերով:

Մարմնի երկարությունը 76-152 սմ է: Ունի երկար, ուղիղ կամ թեթևակի կեռ կտուց, լայն թևեր:

Արագիլների ձայնալարերը զարգացած չեն. նրանք համարյա ձայն չեն հանում, կտուցով կափկափում են*:

Մարդիկ արագիլներին շատ են սիրում, ասում են, որ նա բարություն ու հաջողություն է բերում: Շատ երկրներում, ինչպես նաև Հայաստանում, արագիլներին սպանելը մեղք է:

Նրանց մասին շատ պատմություններ, երգեր, բանաստեղծություններ կան:

*կափկափել - կտուցի բախյունով ձայն արձակել

Որտե՞ղ են բույն հյուսում արագիլները:

_____

_____

Ինչո՞վ են սնվում արագիլները:

_____

_____

Ինչու՞ արագիլները ձայն չունեն:

_____

_____

ՀԱՍՊ
ՍԱՀՅԱՆ

ՍՈՒՐԱ

Մեր այգու դռան մոտով
Գնում է մի ջինջ առու,
Մեր այգու անուշ հոտով
Գնում է, հեռո՛ւ, հեռո՛ւ:

Գնում է, ու չի քնում,
Չի քնում բոլոր տարին,
Գնում է, գնում, գնում,
Խառնվում հրուռանին:

Ափերին՝ ծառ ու ծաղիկ,
Հատակին՝ ոսկի ավազ,
Գնում է ալիք-ալիք,
Հասնում է մինչև Արազ:

Հյուսվում է Արազի հետ,
Նրա հետ մտնում է ծով,
Մեր այգու ցողերի հետ,
Մեր այգու անուշ հոտով:

Մեր այգու դռան մոտով
Գնում է մի ջինջ առու,
Մեր այգու անուշ հոտով
Գնում է, հեռո՛ւ, հեռո՛ւ:

բոլոր տարին - տարվա տարին



Փակագծերում գրված բառերից մեկը ընտրիր և գրիր.

Մեր այգու դռան մոտով

Գնում է մի _____ *առու:*

(ջինջ, պարզ, գոտի, բարեանցիկ)

Մեր այգու _____ *հոտով*

Գնում է, հեռո՛ւ, հեռո՛ւ:

(քնքուշ, անուշ, բարեաբեր)

Գնում է, ու չի քնում,

Չի քնում _____ ...

(օր ու գիշեր, ամբ տարին, բոլոր տարին)

Ափերին ծառ ու ծաղիկ

Հատակին _____ *ավազ...*

(գեղեցիկ, ոսկի, մանր)

Դո՛ւրս գրիր առուն նկարագրող հատվածը:

Ինչպե՞ս ես հասկանում՝

Գնում է, ու չի քնում,
Չի քնում բոլոր տարին:

Առուն ի՞նչ է տանում իր հետ մինչև ծով. դո՛ւրս գրիր այդ հատվածը

Ի՞նքդ հորինիր.

ԱՌՈՒՆ

Ըստ Ա. ԼԻՆԴԳՐԵՆԻ

ԷՄԻԼԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(հատված)

1-ին մաս

Էմիլը գյուղում էր ապրում: Նա շատ չարաճճի էր ու համառ, ուղղակի քո հակառակը, չէ՞: Չնայած շատ բարի ու լսող տղա էր երևում՝ մանավանդ քնած ժամանակ: Ուզո՞ւմ ես նրան նկարագրեմ: Ջինջ, կապույտ աչքեր, թմբլիկ մռութ, կարմիր այտեր ու ցորնագույն խճճված մազեր, ուղղակի հրեշտակ:

Բոլոր հայրիկների նման Էմիլի հայրն էլ անկարգությունների համար պատժում էր իր տղային. ամեն չարությունից հետո Էմիլին գցում էր ցախատուն: Ճիշտն ասած, այնտեղ բոլորովին էլ ձանձրալի չէր: Ցախատանը շատ տախտակներ ու քոթուկներ կային, և Էմիլը ամեն անգամ մի փայտի կտոր էր գտնում ու որևէ ծիծաղելի մարդուկ սարքում դրանից:

Այս անգամ էլ հայրն Էմիլին գցել էր ցախատուն, և նա իր հիսունչորսերորդ մարդուկն էր պատրաստում: Շուտով Էմիլը ձանձրացավ և ուզեց դուրս գալ ցախատնից: Ծնողներն, ըստ երևույթին, հյուրերով էին զբաղված և մոռացել էին նրան: Նա սպասեց, սպասեց, բայց ոչ ոք չեկավ դուռը բացելու: Էմիլը որոշեց ինքնուրույն ազատվել «բանտից»: Տախտակների կույտի վրայով նա մոտեցավ պատուհանին, բացեց այն, ուզեց ցած թռչել, բայց երբ ցած նայեց, պատուհանի տակ եղինջի մի ամբողջ թփուտ տեսավ: Էմիլը մի անգամ թռել էր եղինջների մեջ և հիմա ոչ մի ցանկություն չուներ կրկնել իր «հերոսությունը»...

- Ես հո խելագար չեմ,- ինքն իրեն ասաց Էմիլը, - այստեղից դուրս պրծնելու ուրիշ միջոց կգտնեմ:

Նա մտքի մեջ ընկավ, հետո մի անգամ էլ չորս կողմը նայեց: Հենց այդ ժամանակ էլ նկատեց, որ ցախատանը շատ մոտ գտնվող մառանի պատուհանը բաց է: Նրա գլխում իսկույն մի միտք փայլեց. մի պատուհանից մյուսը տախտակ դնել և դրա վրայով մտնել մառան: Ճիշտն ասած, նա շատ էր հոգնել ցախատանը նստելուց և լա՛վ էլ քաղցած էր:

Էմիլը երկար մտածել չէր սիրում: Մի վայրկյան անց տախտակը դրված էր, և Էմիլը սողում էր նրա վրայով:

Տախտակը ճռճռում ու ճկվում էր: Երբ Էմիլը ցած նայեց ու տեսավ եղինջի բարձր թփերը, վախից ճռճկեց, բայց շարունակեց սողալ և վերջապես հասավ մառան: Նա ետ հրեց տախտակը, որն անհետացավ ու շրխկոցով ընկավ ցախատան տախտակների վրա: Էմիլը գոհ էր իրենից: Նա վազեց դեպի դուռը, բայց դուռը փակ էր:

- Այդպես էլ գիտեի,- հոգոց հանեց Էմիլը: - Բայց ոչինչ, շուտով նրանք կգան երշիկ վերցնելու, այն ժամանակ գնդակի նման դուրս կթռչեմ այստեղից:

Նա սկսեց հոտոտել: Մառանը լցված էր համեղ հոտերով: Շուրջը նայեց: Այ քեզ բա՜ն: Ինչքա՜ն ուտելիք կա: Իսկ մեջտեղի դարակում տնական երշիկներն են:

Ինչ ճիշտ է, ճիշտ է՝ Էմիլը տնական երշիկ սիրում է:

բոթուկ - կոճղ, ծառի բնից կտրած մաս
թփուտ - թփերով ծածկված տեղ
ճկվել - ծռվել, կորանալ, կոր ձև ստանալ

Տրված բառերն ու արտահայտությունները գրի՛ր համապատասխան տեղերում.
դուրս գալ, մտածել, հանկարծակի մի բան մտածել, հառաչել:

հոգոց հանել _____

մտքի մեջ ընկնել _____

գլխում միտք փայլել _____

դուրս պրծնել _____

Ըստ այս պատմության պատմի՛ր Էմիլի հայրիկի մասին:

_____

_____

_____

_____

Ինչպիսի՞ն էր Էմիլը. ճիշտ պատասխանն ընդգծի՛ր՝

խելացի, չարաճճի, լռող, հիմար, միամիտ, կռվարար, ճարպիկ, համառ, հետաքրքրասեր

Դու էմիլին ինչո՞վ ես նման:

Ցավի՞ց էլ օգուտ կա

Բոլորս մտածում ենք՝ ի՜նչ լավ կլիներ, եթե ցավ չլիներ:
Պարզվում է, որ այնքան էլ լավ չէր լինի:
Մի անգամ բժշկի մոտ մի անսովոր հիվանդի էին բերել. նա երբեք ցավ չէր զգացել:
Բռնել էր տաք թավան, վառել էր ձեռքը ու ոչինչ չէր զգացել: Սուր դանակով ձեռքն էր կտրել, ասեղով՝ մատը ծակել:
Ցավ չզգալու պատճառով նրա մարմինը անպաշտպան էր մնացել:
Տաք իրի դիպչելիս՝ քաշում ես ձեռքդ, ճի՞շտ է:
Ոտքդ սուր քարի դիպչելիս՝ ցավում է, ու դու անմիջապես քաշում ես այն:
Ցավը զգուշացնում է, որ պաշտպանես ինքդ քեզ:

Թվի՛ր՝ երբ է մարդ ցավ զգում:

ԷՄԻԼԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(հատված)

2-րդ մաս

... Եվ հանկարծ Էմիլի մայրը բացականչեց.

- Վա՜յ, ախր մենք մոռացել ենք Էմիլին: Նա վաղուց ցախատանն է:

Հայրը վազեց ցախանոց, նրա ետևից սլացավ քույրիկ Իդան:

- Էմի՛լ, արդեն կարող ես դուրս գալ,- կանչեց հայրը՝ լայն բացելով ցախանոցի դուռը:

Պատկերացնո՞ւմ ես՝ նա ինչպես ապշեց: Էմիլը ցախատանը չէր:

- Անպիտանը պատուհանով է փախել,- մտածեց նա:

Բայց երբ պատուհանից նայեց ու տեսավ եղինջի բարձր ու անվնաս մացառուտները, լրջորեն անհանգստացավ:

- Չեմ պատկերացնում՝ նա ո՞ւր կարող է կորչել,- բացականչեց հայրը:

- Այստեղ ոչ մի հետք չկա: Կարող եմ հաստատ ասել, որ այստեղով մարդ չի անցել:

Քույրիկ Իդան սկսեց լաց լինել: Ի՞նչ է պատահել Էմիլին...

Իրենց ծառան տխուր երգ էր երգում մի աղջկա մասին: Այդ աղջկան գցել էին ակուն, նա սպիտակ աղավնի էր դարձել ու երկինք թռել, որ չնստի այդ սարսափելի «բանտում»: Չէ՞ որ Էմիլին էլ էին փակի տակ պահել: Ի՞նչ իմանաս, գուցե նա՞ էլ է թռչուն դարձել ու թռել: Իդան շուրջը նայեց, բայց չալպուտուրիկ հավից բացի ոչ մի թռչուն չտեսավ:

Քույրիկ Իդան ավելի ուժգին լաց եղավ ու ցույց տվեց հավին.

- Գուցե սա Էմի՞լն է:

Էմիլի հայրը, իհարկե, այդ կարծիքին չէր, բայց, չգիտես ինչու, վազեց մայրիկի մոտ:

- Դու չե՞ս նկատել, Էմիլը թռչել կարողանո՞ւմ էր:

- Գուցե պետք է մառանում փնտրել,- ասաց Լինան՝ նրանց ծառան:

Դա բոլորովին էլ հիմար միտք չէ: Բոլորը նետվեցին մառան: Բայց Էմիլը մառանում էլ չէր:

Քույրիկ Իդան հոնգուր-հոնգուր լաց էր լինում: Երբ ոչ ոք նրան չէր նայում, վազում էր չալպտուրիկ հավի մոտ ու շշնջում.

- Չհեռանաս մեզանից, Էմի՛լ: Ես քեզ համար շա՜տ կուտ կբերեմ, միայն թե չթռչես-գնաս:

Հավը ոչինչ չէր ասում, հենց այնպես կոթկոթում էր:

Էմիլին փնտրում էին ամեն տեղ, բոլորն ուղղակի ուժասպառ եղան:

- Գուցե նա գե՞տն է ընկել,- ասաց Լինան:

- Նրան արգելել էինք գետ գնալ, դու դա գիտես,- ասաց մայրը:

Լինան տմբտմբացրեց գլուխը.

- Գիտեմ, այ հենց դրա համար էլ այնտեղ է գնացել:

Բոլորը վազեցին գետափ: Էմիլի հետքերը այստեղ էլ չկային: Բոլորը լաց էին լինում:

Այլևս տեղ չկար, որ Էմիլին փնտրած չլինեին:

- Հիմա ի՞նչ անենք,- հուսահատված հարցրեց մայրը:

- Առաջին հերթին պետք է ուժերը վերականգնել,- որոշեց հայրը: Մայրը սկսեց սեղան պատրաստել: Քիչ հետո դիմեց Լինային.

- Լինա՛, ախր մենք մոռացել ենք երշիկ բերել: Վազիր մառան ու բեր:

Լինան վերադարձավ առանց երշիկի:

- Եկեք իմ ետևից, տեսեք՝ ինչ եմ ցույց տալու:

Բոլորը գնացին: Լինան բացեց մառանի ծանր դուռը ու ներս մտավ: Մառանում նա կանգնեց մեծ պատուհանի առաջ, քմծիծաղով բացեց նրա դռները, ցույց տվեց մեջտեղի դարակը, որտեղ մայրիկը ապխտած երշիկներն էր պահում:

Դարակում երշիկ չկար: Փոխարենը այնտեղ էր Էմիլը:

Նա քնած էր: Պառկել էր երշիկի կեղևների «դեզի» վրա ու քնել: Նրա մայրը երջանիկ էր: Կարևոր չէ, որ Էմիլը կերել էր ամբողջ երշիկը: Մայրիկի համար կարևորը Էմիլի գտնվելն էր, քան մի քանի կիլոգրամ երշիկը: Ասենք, հայրիկի համար, նույնպես:

- Ահա, Էմիլն է պառկած,- ծղրտաց քույրիկ Իդան: - Նա հավ չի դարձել... Առայժմ չի դարձել:

նեղվել - արագ իրեն զգել մի տեղ
մացառուտ - փշոտ, ծակող բույսերով ծածկված տեղ
ուժերը վերականգնել - ուժ հավաքել
ապխտած - հատուկ եղանակով պատրաստած և չորացրած միս

Պատմի՛ր քույր Իդայի մասին:

Քույր Իդան ի՞նչ կպատմի իր եղբոր՝ Էմիլի մասին:

Էմիլը ի՞նչ կպատմի իր հոր մասին:

Քեզ դուր եկա՞վ Էմիլը. ինչո՞ւ:

Ի՞նքդ հորինիր.

ԷՄԻԼԻ ՆՈՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Էմիլի
մյուս արկածների մասին
կարող ես կարդալ
Ա. Լինդգրենի
«Էմիլի արկածները»
գրքում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լուսնկա գիշեր,
Երկինքը պայծառ,
Անհամար աստղեր
Ցոլցլում են վառ:

Քնած է արդեն
Մթնած ու լուռ է
Գյուղացու հյուղը:

Հոգնած գյուղական
Ընտանիքն ահա
Սրահում, կալում,
Կամ կտրի վրա:

Երկնքի դիմաց
Գրկված են քնած,
Վերևից, ասես,
Ժպտում է Աստված:

հյուղ - փոքրիկ տնակ, խրճիթ
կալ - հացահատիկը կալսելու, մանրելու տեղ

Էջն ի՛նքդ ձևավորիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տերևը .....Համո Սահյան 3

Ոգնի 4

Չափարծիտ .....մշակումը՝ Արուսյակ Սահակյանի 5

Ոնճղուկն ու արծիվը 7

Փափուկ ձյուն .....Գեղամ Սարյան 8

Ինչի՞ց է առաջանում ձյունը 9

Ձմեռը .....փոխադրություն՝ Լևոն Շանթից 10

Ոսկու կարասը .....Հովհաննես Թումանյան.....12

Սովորենք շախմատ խաղալ 15

Կիկոսի մահը .....Հովհաննես Թումանյան.....16

Մեր մարմինը 20

Իմ առաջին հանրագիտարան 20

Չարի վերջը .....Հովհաննես Թումանյան.....21

Թռչնի ձագերը 25

Մուկիկի մահը .....Հովհաննես Թումանյան.....26

Լորիկ 29

Պույպույ մկնիկը .....Դերենիկ Դեմիրճյան 30

Ինչի համար են առամները 33

Զատիկ 34

Գնդիկ-Բոքոնիկ .....ռուսական ժողովրդական հեքիաթ.....35

Կռիվը գլուխ չեկավ .....Ավետիք Իսահակյան 38

Ոչ մի բանից մարդուկը .....Ջանի Ռոդարի.....39

Բարի հսկան՝ փիղը 41

Կանաչ ախպեր .....Հովհաննես Թումանյան.....42

Մարտ .....Հովհաննես Թումանյան.....44

Երեկ ու՞ր էիր, Արև՛ 45

Տաղ ձնծաղիկի (հատված) .....Վահագն Դավթյան 46

Կարող է միաժամանակ և՛ ձմեռ լինել, և՛ գարուն 47

Վինի-Թուխ (1-ին մաս) .....Ա.Ա.Միլն 48

Արջ 51

Վինի-Թուխ (2-րդ մաս) 52

Ինչ է սիրում արջը 54

Վինի-Թուխ (3-րդ մաս) 55

Մանչուկն ու Կառլսոնը (1-ին մաս) .....Աստրիդ Լինդգրեն 58

Մանչուկն ու Կառլսոնը (2-րդ մաս) 61

Ինչ դժվար է թռչելը 63

Մանչուկն ու Կառլսոնը (3-րդ մաս) 64

Ավտոմոբիլ 66

Արագիլ (ժողովրդական) .....Հովհաննես Թումանյան.....67

Արագիլ 69

Առուն .....Համո Սահյան 70

Էմիլի արկածները (1-ին մաս) .....Աստրիդ Լինդգրեն 72

Յավի՞ց էլ օգուտ կա 74

Էմիլի արկածները (2-րդ մաս) 75

Ամառվա գիշերը գյուղում .....Հովհաննես Թումանյան.....78

Գիրքը կազմեցին՝

ԱԻԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

և _____

Նկարազարդեցին՝

ԱՐՏԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

և _____

Միդա
Պետրոսյան

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

գիրք-տետր
երկրորդ դասարանցիների համար
(երկրորդ մաս)

Խմբագիր՝ Ա. Համբարձումյան

Գեղ. խմբագիր՝ Ա. Բաղդասարյան

Տեխն խմբագիր և էջադրող՝ Հ. Սարգսյան

Սրբագրիչ՝ Ն. Գևորգյան

Համակարգչային շարվածքը՝ Հ. Մալխասյան

Ստորագրված է տպագրության՝ 08.01.1997թ.:
Ծավալը՝ 10.5 տպ. մամուլ: Չափսը՝ 60x84 1/8:
Թուղթ՝ օֆսեթ № 1, 70գր/մ^2:
Տպագրությունը՝ օֆսեթ:
Առաջին թողարկում: Տպաքանակը՝ 10000:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության
«ՆՈՐ ԴԴՐՈՑ» հրատարակչություն:
Երևան, Սիմոն Վրացյանի փող., 73:

Տպագրված է «ՎԱ-ՅԱ» ՍՊԸ տպարանում
Երևան, Սպորտինտերնի փող., 73:



«ՆՈՐ ԴՊՐՈՑ»
ԵՐԵՎԱՆ 1997

ՁՄԵՌԸ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Լ. ՇԱՆԹԻՑ

- Օ՜ֆ, ե՞րբ պիտի անցնի այս անպիտան ձմեռը,- ասում էին մարդիկ:
- Օ՜ֆ, ե՞րբ պիտի վերջանա այս անիրավ ձմեռը,-գանգատվում էին կենդանիները նեղ որջերում:
- Օ՜ֆ, ե՞րբ պիտի ազատվենք այս անտանելի ձմռան ձյունից,- տրտնջում էին թռչունները մերկ ճյուղերի վրա:

Սաստիկ բարկացավ ձմեռը և վճռեց միանգամից ոչնչացնել ամենքին: Ձայն տվեց սառը քամիներին, կանչեց սառնամանիքներին, հավաքեց իր ամբողջ զորությունը՝ և հարձակվեց աշխարհի վրա:

Խոր ձյունով բռնեց բոլոր ճամփաները, սառույցով կապեց գետերը, սառցե սրեր կախեց տանիքներից ու ծառերից, սառցե վարագույրներ քաշեց պատուհաններին, ծածկեց բոլոր որջերի մուտքերը, դանակի պես սուր քամի արձակեց դաշտերի, սարերի, ձորերի վրա:

Բայց իզուր:

Թռչունները կուչ եկան տների ծածկերի տակ, ծխնելույզների մոտ, տաք ճեղքերի մեջ ու ապրեցին: Վայրի կենդանիները, հաստ մուշտակներ հագած, չվախեցան ձմռան բարկությունից, դուրս ելան՝ որս անելու:

Մարդիկ ամուր փակեցին պատուհաններն ու դռները, վառեցին վառարանները, տաք հագնվեցին ու գնացին իրենց գործին:

Ձմեռն այս բոլորը տեսավ ու հուսահատվեց:

Յուրտը օր օրի թուլացավ, արևը գնալով ավելի տաքացավ, լսվեց ջրերի գլգլոցը, թռչունները երգեցին, դաշտերը քիչ-քիչ կանաչ հագան, ու մարդիկ բացեցին դուռ ու լուսամուտ:

Գարուն էր:



գանգատվել - բողոքել
վճռել - որոշել
զորություն - ուժ, հզորություն
որջ - գազանների բույն